



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ԲԱՅԱԹՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 23459/03)

ՎՃԻՌ

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

7 հուլիսի 2011թ.

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետեւյալ կազմով՝

Ժան-Փոլ Կոստա [Jean-Paul Costa]՝ *Նախագահ,*

Քրիստոս Ռոզակիս [Christos Rozakis],

Նիկոլաս Բրացա [Nicolas Bratza],

Փիր Լորենզեն [Peer Lorenzen],

Ֆրանսուա Տուլկենս [Françoise Tulkens],

Նինա Վայիչ [Nina Vajić],

Լեխ Գարլիցկի [Lech Garlicki],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Դին Շպիլմանն [Dean Spielmann],

Ղենաթե Յեգա [Renate Jaeger],

Սվեռե Էրիկ Յեբենս [Sverre Erik Jebens],

Պաիվի Հիրվելա [Päivi Hirvelä],

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska],

Լեդի Բիանկու [Ledi Bianku],

Միհայ Պուալելունջ [Mihai Poalelungi],

Նեբոյշա Վուչինիչ [Nebojša Vučinić], Գուիդո Ռայմոնդի [Guido Raimondi]՝
դատավորներ,

Էլ Վինսնթ Բերգեր [Vincent Berger]՝ *հրավախորհրդատու,*

2010 թվականի նոյեմբերի 24-ին եւ 2011 թվականի հունիսի 1-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վահան Բայաթյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2003 թվականի հուլիսի 22-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 23459/03) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Ջորջթաունում (Կանադա) գործող իրավաբան պրն Ջ.Մ. Բըրնսը, Փաթերսոնում (ԱՄՆ) գործող իրավաբան պրն Ա. Կարբոնյոն, Երեւանում գործող իրավաբան պրն Ռ. Խաչատրյանը, ինչպես նաեւ Սավոյի եւ Ժնեւի համալսարանների իրավագիտության պրոֆեսոր պրն Պ. Մուզին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ բանակում ծառայելուց հրաժարվելու համար իրեն դատապարտելու հետեւանքով խախտվել է իր մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը:

4. Գանգատը հասցեագրվել է Դատարանի Երրորդ բաժանմունքին (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): 2006 թվականի դեկտեմբերի 12-ին այդ Բաժանմունքի պալատը, հետեւյալ կազմով՝ Բոշտյան Մ. Ջուպանչիչ [Boštjan M. Zupančič]՝ Նախագահ, Ջոն Հեդիգն [John Hedigan], Կորնելիու Բիրսան [Corneliu Bîrsan], Վլադիմիրո Ջագրիբելսկի [Vladimiro Zagrebelsky], Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan], Դեվիդ Տոր Բյորգվինսոն [Davíd Thór Björgvinsson], Իզաբել Բերո-Լեֆեւր [Isabelle Berro-Lefèvre]՝ դատավորներ, ինչպես նաեւ Վինսենթ Բերգեր [Vincent Berger]՝ Բաժանմունքի քարտուղար, գանգատը հայտարարել է մասնակի ընդունելի: 2009 թվականի հոկտեմբերի 27-ին այդ Բաժանմունքի պալատը, հետեւյալ կազմով՝ Ժոզեփ Կասադեվալ [Josep Casadevall]՝

Նախագահ, Էլիզաբեթ Ֆուրա [Elisabet Fúra], Կորնելիու Բիրսան [Corneliu Birsan], Բոշտյան Մ. Զուպանչիչ [Boštjan M. Zupančič], Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan], Էլբերտ Մայեր [Egbert Myjer], Էն Փաուեր [Ann Power]՝ *դատավորներ*, ինչպես նաև Սթենլի Նեյսմիթ [Stanley Naismith]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*, կայացրել է վճիռ, որով ձայների վեց կողմ էլ մեկ դեմ հարաբերակցությամբ ընդունել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Վճռին կից ներկայացվել են դատավոր Ֆուրայի [Fura] համընկնող եւ դատավոր Փաուերի [Power] չհամընկնող կարծիքները:

5. 2010 թվականի մայիսի 10-ին, հիմք ընդունելով դիմումատուի կողմից 2010 թվականի հունվարի 25-ին ներկայացված պահանջը, Մեծ պալատի կոլեգիան որոշել է գործը հանձնել Մեծ պալատի քննությանը՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածին համապատասխան:

6. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի դրույթների եւ Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն:

7. Դիմումատուն եւ Կառավարությունը ներկայացրել են դիտարկումներ: Ի լրումն ներկայացվել են նաև Դատարանի նախագահի կողմից որպես ներգրավված երրորդ կողմ հրավիրված կազմակերպությունների՝ «Միջազգային համաներում» կազմակերպության [Amnesty International], «Խղճի եւ խաղաղության հարկ» միջազգային կազմակերպության [Conscience and Peace Tax International], Խորհրդատվության հարցերով ընկերների համաշխարհային կոմիտեի [Friends World Committee for Consultation (Quakers)], Իրավաբանների միջազգային հանձնաժողովի [International Commission of Jurists], «Պատերազմի հակառակորդներ» միջազգային կազմակերպության [War Resisters' International] համատեղ, ինչպես նաև Եհովայի վկաների ասոցիացիայի [European Association of Jehovah's Christian Witnesses] գրավոր դիտարկումները (Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ կետ եւ Դատարանի կանոնակարգի 44-րդ կանոնի 3-րդ կետ):

8. Լսումը տեղի է ունեցել 2010 թվականի նոյեմբերի 24-ին Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների դատարանի շենքում (59-րդ կանոնի 3-րդ կետ):

Դատարան են ներկայացել.

ա) *Կառավարության կողմից՝*

պրն Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆ՝

լիազոր ներկայացուցիչ,

պրն Է. ԲԱԲԱՅԱՆ՝

լիազոր ներկայացուցչի տեղակալ,

բ) *դիմումատուի կողմից՝*

պրն Ա. ԿԱՐԲՈՆՅՈՒ,

պրն Պ. ՄՈՒԶՆԻ՝

խորհրդական,

պրն Վ. ԲԱՅԱԹՅԱՆ՝

դիմումատու:

Դատարանը լսել է պրն Կարբոնյոյի, պրն Մուզնիի եւ պրն Կոստանյանի դիրքորոշումները եւ իր անդամների կողմից առաջադրված հարցերի պատասխանները:

ՓԱՍՏԵՐԸ**I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

9. Դիմումատուն ծնվել է 1983 թվականին եւ ապրում է Երեւանում:

Ա. Գործի նախապատմությունը

10. Դիմումատուն Եհովայի վկա է: 1997 թվականից ի վեր նա մասնակցել է Եհովայի վկաների բազմաթիվ կրոնական ծիսակատարությունների եւ մկրտվել է 1999 թվականի սեպտեմբերի 18-ին՝ 16 տարեկան հասակում:

11. 2000 թվականի հունվարի 16-ին դիմումատուն հաշվառվել է Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատում՝ որպես զինապարտ:

12. 2001 թվականի հունվարի 16-ին դիմումատուն 17 տարեկան հասակում հրավիրվել է անցնելու բժշկական քննություն, որի արդյունքներով նա ճանաչվել է զինվորական ծառայության համար պիտանի: Դիմումատուն զինվորական ծառայության անցնելու համար պետք է զորակոչվեր 2001 թվականի գարնանային զորակոչի ընթացքում (ապրիլից հունիս):

13. 2001 թվականի ապրիլի 1-ին՝ զորակոչի ժամանակաշրջանի սկզբում, դիմումատուն ՀՀ զլխավոր դատախազին, ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինկոմիսարին եւ ՀՀ Ազգային ժողովին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողով է ուղարկել հետեւյալ նույն բովանդակությամբ նամակներ.

«Ես՝ Վահան Բայաթյանս՝ ծնված 1983 թվականին, հայտնում եմ Ձեզ, որ 1996 թվականից ուսումնասիրել եմ Աստվածաշունչը եւ Եսայիա 2:4-ում գրված խոսքերին համահունչ՝ Աստվածաշնչով կրթել իմ խիղճը եւ համոզմունքների հիմնավորմամբ հրաժարվում եմ զինվորական ծառայություն կատարելուց: Միեւնույն ժամանակ հայտնում եմ Ձեզ, որ պատրաստ եմ կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն՝ զինվորական ծառայության փոխարեն»:

14. Մայիսի սկզբին դիմումատուի տան հասցեով ուղարկվել է 2001 թվականի մայիսի 15-ին զինվորական ծառայության ներկայանալու մասին ծանուցագիր: 2001 թվականի մայիսի 14-ին Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատի աշխատակիցը զանգահարել է դիմումատուի տուն եւ հարցրել նրա մորը, թե արդյոք դիմումատուն տեղյակ է, որ հաջորդ օրը նա պետք է ներկայանա կոմիսարիատ՝ զինվորական ծառայության գորակոչվելու համար: Նույն օրը Էրեկոյան դիմումատուն ժամանակավորապես հեռացել է իր տնից՝ վախենալով, որ նրան ստիպողաբար կտանեն ծառայության վայր:

15. 2001 թվականի մայիսի 15-ին եւ 16-ին կոմիսարիատի աշխատակիցները զանգահարել են դիմումատուի մորը՝ պահանջելով հայտնել տեղեկություններ դիմումատուի գտնվելու վայրի մասին: Նրանք սպառնացել են նրան ուժով տանել ծառայության վայր, եթե նա կամովին չներկայանա: 2001 թվականի մայիսի 17-ի վաղ առավոտյան կոմիսարիատի աշխատակիցները եկել են դիմումատուի տուն: Նրա ծնողները քնած են եղել եւ դուռը չեն բացել: Նույն օրը դիմումատուի մայրը գնացել է կոմիսարիատ, որտեղ հայտնել է, որ դիմումատուն հեռացել է տնից, եւ որ ինքը տեղյակ չէ, թե երբ նա կվերադառնա: Ըստ դիմումատուի՝ կոմիսարիատի կողմից հետազայում քայլեր չեն ձեռնարկվել իր ընտանիքի հետ կապ հաստատելու համար:

16. 2001 թվականի մայիսի 29-ին ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի հանձնաժողովը պատասխանել է դիմումատուի՝ 2001 թվականի ապրիլի 1-ի նամակին՝ նշելով, որ.

«Ձեր հայտարարության կապակցությամբ ... հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ծառայել հայկական բանակում: Քանի որ Հայաստանում դեռեւս չի ընդունվել այլընտրանքային ծառայության մասին որեւէ օրենք, Դուք պետք է ենթարկվեք գործող օրենքին եւ ծառայեք հայկական բանակում»:

17. 2001 թվականի հունիսի սկզբից մինչեւ հունիսի կեսն ընկած ժամանակահատվածում դիմումատուն վերադարձել է տուն, որտեղ ապրել է մինչեւ 2002 թվականի սեպտեմբերի իր ձերբակալումը:

18. 2001 թվականի հունիսի 12-ին Ազգային ժողովն ընդհանուր համաներում

է հայտարարել, որը վերաբերում էր միայն այն անձանց, որոնք հանցագործություն էին կատարել մինչեւ 2001 թվականի հունիսի 11-ը, եւ որն ուժի մեջ էր մինչեւ 2001 թվականի սեպտեմբերի 13-ը:

Բ. Ղիմումատուի դեմ հարուցված քրեական գործը

19. 2001 թվականի հունիսի 26-ին Էրեբունի համայնքի զինկոմիսարը Էրեբունի համայնքի դատախազին ուղարկել է գրություն այն մասին, որ 2001 թվականի մայիսի 15-ին ղիմումատուն չի ներկայացել զինվորական ծառայության անցնելու համար եւ միտումնավոր խուսափում է զինվորական ծառայությունից:

20. 2001 թվականի հուլիս ամսվա ընթացքում եւ օգոստոսի 1-ին ղիմումատուն հոր եւ պաշտպանի հետ մի քանի անգամ ներկայացել է համայնքի դատախազություն՝ համապատասխան քննիչից իր դրությունը պարզաբանելու եւ առաջիկա վարույթի հետ կապված հարցերը քննարկելու համար:

21. 2001 թվականի օգոստոսի 1-ին քննիչը ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու փաստի առթիվ քրեական գործով վարույթ է հարուցել ղիմումատուի դեմ՝ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն: Ըստ ղիմումատուի՝ վերադաս դատախազը հրաժարվել է նրա դեմ մեղադրանք առաջադրելուց մինչեւ հետագա քննության իրականացումը: 2001 թվականի օգոստոսի 8-ին ղիմումատուն, որը թերեւս ցանկացել է օգտվել վերոնշյալ համաներումից, այս առնչությամբ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն: Նա այս բողոքին ոչ մի պատասխան չի ստացել:

22. 2001 թվականի հոկտեմբերի 1-ին քննիչը ղիմումատուի վերաբերյալ կայացրել է հինգ որոշում. 1) ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար ղիմումատուին որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն, 2) ղիմումատուի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու թույլտվություն ստանալու համար

դատարանին դիմելու մասին, 3) դիմումատուին քննությունից թաքնվող անձ ճանաչելու եւ նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, 4) դիմումատուի նամակագրությունը վերահսկելու թույլտվություն ստանալու համար դատարանին դիմելու մասին, եւ 5) մինչեւ դիմումատուին հայտնաբերելը քրեական գործի վարույթը կասեցնելու մասին: Համաձայն այս վերջին որոշման՝

«...քանի որ, ձեռնարկելով քննչական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, հետախուզվող անձին [դիմումատուին] գտնելու փորձերն անհաջող են եղել երկու ամսվա ընթացքում, եւ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, ... [անհրաժեշտ է] կասեցնել գործի քննությունը ... եւ ... ակտիվացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ մեղադրյալին գտնելու համար»:

23. Ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա ընտանիքի անդամները չեն ծանուցվել այս որոշումների մասին՝ չնայած այն հանգամանքին, որ 2001 թվականի հունիսի կեսից դիմումատուն բնակվել է իր տանը, իսկ 2001 թվականի հուլիս եւ օգոստոս ամիսներին մի քանի անգամ հանդիպել է քննիչի հետ:

24. 2001 թվականի հոկտեմբերի 2-ին Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը թույլատրել է վերահսկել դիմումատուի նամակագրությունը եւ որոշում է կայացրել նրան կալանավորելու մասին: Ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա ընտանիքի անդամները չեն ծանուցվել այս որոշումների մասին, իսկ նախաքննության մարմինը որեւէ փորձ չի կատարել նրանց հետ կապ հաստատելու համար՝ մինչեւ 2002 թվականի սեպտեմբերին նրա ձերբակալումը:

25. 2002 թվականի ապրիլի 26-ին Կոնվենցիան Հայաստանի համար ուժի մեջ է մտել:

Գ. Դիմումատուի ձեռքակալումը եւ դատական քննությունը

26. 2002 թվականի սեպտեմբերի 4-ին, մինչ դիմումատուն գտնվում էր աշխատանքի վայրում, ոստիկանության երկու աշխատակիցներ այցելել են նրա տուն եւ տեղեկացրել ծնողներին, որ նրանց տղան հետախուզվում է, ու հարցրել են վերջինիս գտնվելու վայրի մասին:

27. 2002 թվականի սեպտեմբերի 5-ին ոստիկանության աշխատակիցները վերադարձել են եւ դիմումատուին ուղեկցել ոստիկանության համապատասխան տարածքային բաժանմունք, որտեղ կազմվել է արձանագրություն դիմումատուի՝ կամովին ներկայանալու մասին, որում նշվում է, որ դիմումատուն, պարզելով, որ գտնվում է հետախուզման մեջ, որոշել է ներկայանալ ոստիկանության բաժին: Նույն օրը դիմումատուին տեղափոխել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավայր:

28. 2002 թվականի սեպտեմբերի 9-ին նախաքննության մարմինը վերսկսել է դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով վարույթը:

29. 2002 թվականի սեպտեմբերի 11-ին դիմումատուին առաջին անգամ ներկայացվել է 2001 թվականի հոկտեմբերի 1-ին իրեն առաջադրված մեղադրանքը (տես վերելում՝ 22-րդ պարբերությունը): Նույն օրը հարցաքննության ժամանակ դիմումատուն նշել է, որ նա, իր կրոնական համոզմունքներից ելնելով, գիտակցաբար հրաժարվել է զինվորական ծառայությունից, բայց դրա փոխարեն պատրաստ է եղել կատարելու այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

30. Նույն օրը դիմումատուին եւ նրա պաշտպանին տրվել է գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն: Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2002 թվականի սեպտեմբերի 18-ին եւ դատախազի կողմից հաստատվել 2002 թվականի սեպտեմբերի 23-ին:

31. 2002 թվականի հոկտեմբերի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում սկսվել է դիմումատուի գործով դատական քննությունը: Դատական նիստը հետաձգվել է

մինչև 2002 թվականի հոկտեմբերի 28-ը, քանի որ դիմումատուին չէր տրամադրվել մեղադրական եզրակացության պատճենը:

32. 2002 թվականի հոկտեմբերի 28-ին կայացած դատական նիստի ընթացքում դիմումատուն կրկնել է այն հայտարարությունը, որը կատարել էր հարցաքննության ժամանակ (տես վերելում՝ 29-րդ պարբերությունը):

33. Նույն օրը Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում եւ նրան դատապարտել մեկ տարի եւ վեց ամիս ժամկետով ազատազրկման:

34. 2002 թվականի նոյեմբերի 29-ին դատախազը վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ դատավճռի դեմ՝ պահանջելով նշանակել ավելի խիստ պատիժ: Վերաքննիչ բողոքում նշված էր հետևյալը.

«[Դիմումատուն] չի ընդունել իր մեղքն այն բացատրությամբ, որ նա հրաժարվել է [զինվորական] ծառայությունից Աստվածաշունչն ուսումնասիրելու արդյունքում, եւ, լինելով Եհովայի վկա, նրա հավատքը չի թույլատրում իրեն ծառայել Հայաստանի զինված ուժերում:

[Դիմումատուն] ֆիզիկապես առողջ է եւ չի աշխատում:

Կարծում եմ, որ դատարանն ակնհայտ մեղմ պատիժ է նշանակել եւ հաշվի չի առել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, [դիմումատուի] անձը բնութագրող հատկանիշները, ինչպես նաեւ դիմումատուի՝ [զինվորական] ծառայությունից հրաժարվելու՝ ակնհայտ անհիմն եւ վտանգավոր պատճառաբանությունները»:

35. 2002 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն առարկություն է ներկայացրել ի պատասխան դատախազի վերաքննիչ բողոքի՝ պնդելով, որ կայացված դատավճիռը խախտում է դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածով, Կոնվենցիայի 9-րդ հոդվածով եւ այլ միջազգային փաստաթղթերով երաշխավորված՝ խղճի եւ կրոնի ազատությունը: Նա նաեւ պնդել է, որ այլընտրանքային քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքի բացակայությունը չի կարող համարվել խղճի նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնավորում:

36. 2002 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում դատախազը, *inter alia*, պնդել է, որ ավելի խիստ պատիժ պետք է նշանակվի նաեւ այն պատճառով, որ դիմումատուն թաքնվել է քննությունից: Ըստ դիմումատուի՝ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում նրա նկատմամբ ճնշում է գործադրվել, որպեսզի նա հրաժարվի զինվորական ծառայությանն առնչվող իր կրոնական համոզմունքներից. մասնավորապես, ինչպես դատախազը, այնպես էլ դատավորներից մեկը նրան առաջարկել են կարճել գործը, եթե նա հրաժարվի իր առարկությունից եւ կատարի իր զինվորական պարտքը:

37. Նույն օրը Վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել դատախազի վերաքննիչ բողոքը եւ խստացրել է պատիժը՝ դիմումատուին դատապարտելով երկուսուկես տարի ժամկետով ազատազրկման՝ նշելով, որ.

«Առաջին ատյանի դատարանը [դիմումատուի նկատմամբ] պատիժ նշանակելիս հաշվի է առել, որ [դիմումատուն] կատարել է ոչ ծանր հանցագործություն, երիտասարդ է, նախկինում արատավորված չի եղել, խոստովանել է իր մեղքը, ակտիվորեն աջակցել է հանցագործությունը բացահայտելու գործում եւ անկեղծորեն զղջացել է:

Սակայն, վերաքննիչ վարույթի ժամանակ հաստատվել է, որ [դիմումատուն] ոչ միայն չի ընդունել իր մեղքը, այլեւ չի զղջացել իր կատարած հանցագործության համար, եւ ոչ միայն չի աջակցել հանցագործությունը բացահայտելու գործում, այլեւ թաքնվել է նախաքննությունից, իսկ նրա գտնվելու վայրը հայտնի չի եղել, ինչի հետեւանքով նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

Հիմնվելով այս հանգամանքների վրա, ինչպես նաեւ հաշվի առնելով հանցագործության բնույթը, շարժառիթները եւ հանրության համար վտանգավորության աստիճանը՝ Վերաքննիչ դատարանը համարում է, որ դատախազի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել եւ [դիմումատուի նկատմամբ] նշանակել ավելի խիստ եւ համաչափ պատիժ:»:

38. Չպարզված օրը դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել այս դատավճռի դեմ՝ ներկայացնելով 2002 թվականի դեկտեմբերի 19-ի իր առարկության մեջ նշված փաստարկների հետ նույնական փաստարկներ (տես վերելում՝ 35-րդ պարբերությունը): Նա կրկին նշել է իր պատրաստակամությունը՝ կատարելու այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, եւ նշել է, որ բանտում

երկուսուկես տարի անցկացնելու փոխարեն ինքը կարող էր կատարել հասարակության համար օգտակար աշխատանք: Ըստ նրա՝ նման հնարավորություն նախատեսված էր «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով (տես ներքեւում՝ 43-րդ պարբերությունը): Դիմումատուն նաեւ պնդել է, որ այլընտրանքային ծառայության սկզբունքն ամրագրված էր «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում (տես ներքեւում՝ 44-րդ պարբերությունը), իսկ դիմումատուն չէր կարող մեղադրվել կիրառման համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով:

39. 2003 թվականի հունվարի 24-ին ՀՀ վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի դատավճիռը՝ *inter alia*, նշելով, որ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն (տես ներքեւում՝ 41-րդ պարբերությունը), Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները ենթակա են սահմանափակումների, օրինակ՝ պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով: Նման սահմանափակումներ նախատեսվում էին նաեւ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով:

40. 2003 թվականի հուլիսի 22-ին դիմումատուն իր պատիժը տասն ու կես ամիս կրելուց հետո պայմանական վաղաժամկետ ազատվել է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1995 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (մինչև 2005 թվականի փոփոխությունները)

41. Սահմանադրության համապատասխան դրույթներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 23

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունք:»

Հոդված 44

«Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության եւ բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:»

Հոդված 47

«Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:»:

Բ. 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգիրք (ուժը կորցրել է 2003 թվականի օգոստոսի 1-ին)

42. ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

**Հոդված 75. Իսկական զինվորական ծառայության
հերթական գորակոչից խուսափելը**

«Իսկական զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելը՝ պատժվում է ազատազրկմամբ մեկից մինչև երեք տարի ժամանակով:»:

Գ. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք (ուժի մեջ է 1998 թվականի հոկտեմբերի 16-ից)

43. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 3. Զինապարտությունը

«1. Զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:»

Հոդված 11. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչը

«1. Պարտադիր զինվորական ծառայության են գորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի գորակոչիկները եւ առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:»

Հոդված 12. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելը

«1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝ ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից. բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, եւ նա այդ ընտանիքի միակ արու զավակն է. գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ. դ) մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին. ե) գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:»

Հոդված 16. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ հիմքերով տարկետում ստանալը

«2. Առանձին դեպքերում կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաները եւ առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:»:

Դ. «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ուժի մեջ է 1991 թվականի հուլիսի 6-ից)

44. «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

[Նախաբան]

« ... առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների սկզբունքներով եւ հավատարիմ լինելով Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին ... Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունում է սույն օրենքը Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպության մասին ... :»

Հոդված 19

«Գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաեւ կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

Քաղաքացիական պարտականությունների եւ կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի եւ տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:»:

Ե. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին եւ ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 1-ին)

45. «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթները՝ 2004 թվականի նոյեմբերի 22-ի փոփոխություններով, ունեն հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 2. Այլընտրանքային ծառայության հասկացությունը եւ տեսակները

«1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝ ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն. բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

3. Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի եւ հասարակության առջեւ քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է եւ չունի պատժի, անձի պատվի եւ արժանապատվության նվաստացման բնույթ:»

Հոդված 3. Այլընտրանքային ծառայություն անցնելու հիմքը

«1. Այլընտրանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաեւ զենք կրելը, պահելը, պահպանելը եւ օգտագործելը:»

III. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

46. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրության վերաբերյալ Դատարանում առկա նյութերից պարզ է դառնում, որ գրեթե բոլոր անդամ պետությունները, որոնք ունեցել են կամ դեռ ունեն պարտադիր զինվորական ծառայության համակարգ, ընդունել են օրենքներ, որոնցով ճանաչել եւ կիրառել են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, որոշ պետություններ դա արել են անգամ մինչեւ Եվրոպայի խորհրդին անդամակցելը: Առաջինը Միացյալ Թագավորությունն էր՝ 1916 թվականին, որին հետեւեցին Դանիան (1917 թվական), Շվեդիան (1920 թվական), Նիդեռլանդները (1920-1923 թվականներ), Նորվեգիան (1922 թվական), Ֆինլանդիան (1931 թվական), Գերմանիան (1949 թվական), Ֆրանսիան եւ Լյուքսեմբուրգը (1963 թվական), Բելգիան (1964 թվական), Իտալիան (1972 թվական), Ավստրիան (1974 թվական), Պորտուգալիան (1976 թվական) եւ

Իսպանիան (1978 թվական):

47. Ճանաչումների մեծ ալիք տեղի ունեցավ 1980-ականների վերջում եւ 1990-ականներին, երբ գրեթե բոլոր անդամ եւ հետազայում անդամակցող պետությունները, որոնք դեռ չէին արել դա, ընդգրկեցին այդ իրավունքն իրենց ներպետական իրավական համակարգում: Դրանք էին՝ Լեհաստանը (1988 թվական), Չեխիայի Հանրապետությունը եւ Հունգարիան (1989 թվական), Խորվաթիան (1990 թվական), Էստոնիան, Մոլդովան եւ Սլովենիան (1991 թվական), Կիպրոսը, նախկին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը (2006 թվականին այն բաժանվեց երկու անդամ պետությունների՝ Սերբիա եւ Մոնտենեգրո, երկուսն էլ ճանաչել են այդ իրավունքը) եւ Ուկրաինան (1992 թվական), Լատվիան (1993 թվական), Սլովակիայի Հանրապետությունը եւ Շվեյցարիան (1995 թվական), Բոսնիա եւ Հերցեգովինան, Լիտվան եւ Ռումինիան (1996 թվական), Վրաստանը եւ Հունաստանը (1997 թվական), ինչպես նաեւ Բուլղարիան (1998 թվական):

48. Մնացած անդամ պետություններից նախկին Մակեդոնիայի Հարավսլավական Հանրապետությունը, որը վաղ՝ 1992 թվականին, անցել էր ոչ զինված զինվորական ծառայության համակարգի, 2001 թվականին նույնպես ընդունեց իսկական այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենք: Ռուսաստանը եւ Ալբանիան, որոնք համապատասխանաբար 1993 թվականին եւ 1998 թվականին սահմանադրորեն ճանաչել էին կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, ամբողջովին կիրարկել են այն՝ համապատասխանաբար 2004 թվականին եւ 2003 թվականին ընդունված օրենքների միջոցով: Ադրբեջանը սահմանադրորեն ճանաչել է այդ իրավունքը 1995 թվականին, սակայն կիրարկող օրենք դեռեւս չի ընդունվել: Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը չի ճանաչվել Թուրքիայի կողմից:

49. Այն անդամ պետություններում, որտեղ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվել է կամ

ճանաչվում է եւ ամբողջովին իրագործվում է, այդ կարգավիճակը կարող էր կամ կարող է պահանջվել՝ ոչ միայն ելնելով կրոնական, այլ նաեւ անձնական առավել լայն ոչ կրոնական համոզմունքներից. միակ բացառությունը կազմում են Ռումինիան եւ Ուկրաինան, որտեղ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու կարգավիճակ պահանջելու իրավունքը սահմանափակվում է բացառապես կրոնական հիմքով: Որոշ անդամ պետություններում, ինչպիսիք են Լեհաստանը, Բելգիան եւ Ֆինլանդիան, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու կարգավիճակ պահանջելու իրավունքը կիրառվել է կամ կիրառվում է միայն խաղաղ պայմաններում, մինչդեռ այլ երկրներում՝ Մոնտենեգրոյում եւ Սլովակիայի Հանրապետությունում, նման կարգավիճակ պահանջելու իրավունքը կիրառվում է միայն մոբիլիզացիայի կամ պատերազմի ժամանակ: Ի վերջո, որոշ անդամ պետություններ, օրինակ՝ Ֆինլանդիան, թույլատրում են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը կրող՝ որոշակի կատեգորիայի անձանց ազատվել նաեւ այլընտրանքային ծառայությունից:

IV. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Եվրոպական փաստաթղթեր

1. Եվրոպայի խորհուրդ

ա) Հայաստանի վերաբերյալ փաստաթղթեր

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՎ) թիվ 221 եզրակացությունը (2000 թվական). Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար Հայաստանի դիմումը

50. 2000 թվականի հունիսի 28-ին Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար Հայաստանի դիմումի վերաբերյալ ԵԽՎ-ն ընդունել է թիվ 221

եզրակացությունը: ԵՄԽՎ-ն իր եզրակացությունն ավարտել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ուղղված առաջարկությամբ՝ Հայաստանին առաջարկելու դառնալ անդամ՝ պայմանով, որ նախատեսված ժամկետներում պետք է կատարվեն մի շարք պարտավորություններ: Եզրակացության համապատասխան հատվածի համաձայն՝

«13. Խորհրդարանական վեհաժողովը հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի եւ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախագահների կողմից ուղարկված նամակները եւ նշում է, որ Հայաստանը հանձն է առնում կատարել հետևյալ պարտավորությունները. ... անդամակցությունից հետո երեք տարվա ընթացքում ընդունել եվրոպական չափանիշներին համապատասխան այլընտրանքային ծառայության մասին օրենք եւ, միեւնոյն ժամանակ, ներում շնորհել համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարված բոլոր անձանց, որոնք դատապարտվել են ազատազրկման կամ պահվում են կարգապահական գումարտակներում՝ նրանց հնարավորություն ընձեռելով այլընտրանքային ծառայության վերաբերյալ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընտրություն կատարելու ոչ զինված զինվորական ծառայության կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջեւ»:

բ) Ընդհանուր փաստաթղթեր

ի) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

51. Կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին ԵՄԽՎ-ի կողմից առաջին անգամ ակնարկ կատարվել է 1967 թվականին՝ իր թիվ 337 (1967) բանաձեւում, որում սահմանվել են հետևյալ հիմնական սկզբունքները.

«1. Զորակոչի ենթակա այն անձինք, ովքեր, ելնելով խղճի կամ դավանանքի, ինչպես նաեւ կրոնական, էթիկայի, բարոյական, մարդասիրական, գաղափարախոսական կամ նման այլ համոզմունքներից, հրաժարվում են իրականացնել զինվորական ծառայություն, ունեն իրավունք ազատվելու նման ծառայություն իրականացնելու պարտականությունից:

2. Սույն իրավունքը ժողովրդավարական եւ օրենքի գերակայության պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված՝ անհատի հիմնարար իրավունքներից տրամաբանորեն բխող իրավունք է»:

52. Այդ բանաձևի հիման վրա ԵՄԽՎ-ն ընդունել է թիվ 478 (1967) հանձնարարականը՝ կոչ անելով Նախարարների կոմիտեին հրավիրել անդամ պետություններին հնարավորինս համապատասխանեցնելու իրենց ազգային օրենսդրությունները հիմնական սկզբունքներին: Այնուհետև ԵՄԽՎ-ն վերահաստատել է զարգացրել է հիմնական սկզբունքներն իր թիվ 816 (1977) եւ 1518 (2001) հանձնարարականներում: Վերջին հանձնարարականում նշվել է, որ կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը Կոնվենցիայով նախատեսված «մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի էական տարրերից է»: Նշվել է նաեւ, որ անդամ պետություններից միայն հինգ պետություն դեռեւս չեն ճանաչել այդ իրավունքը, եւ առաջարկվել է Նախարարների կոմիտեին հրավիրել վերջիններիս իրականացնելու իրենց պարտավորությունը:

53. 2006 թվականին ԵՄԽՎ-ն ընդունել է թիվ 1742(2006) հանձնարարականը, որը վերաբերում էր զինված ուժերի անձնակազմի անդամների մարդու իրավունքներին՝ կոչ անելով անդամ պետություններին, *inter alia*, իրենց օրենսդրություններում ամրագրել ցանկացած ժամանակ որպես կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվող անձ գրանցվելու իրավունքը, ինչպես նաեւ կադրային զինվորականների՝ կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվող անձի կարգավիճակ ստանալու իրավունքը:

ii) Նախարարների կոմիտե

54. 1987 թվականին Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ R(87)8 հանձնարարականը, որով անդամ պետություններին առաջարկել է ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը եւ կոչ արել այն կառավարություններին, որոնք դեռ չէին արել դա, համապատասխանեցնել իրենց ազգային իրավունքը եւ իրավակիրառ պրակտիկան հետեւյալ հիմնական սկզբունքին.

«Զորակոչի ենթակա այն անձինք, ովքեր իրենց ունեցած ծանրակշիռ համոզմունքների պատճառով հրաժարվում են զենք կրելու հետ կապված զինվորական ծառայությունից, իրավունք ունեն ազատվելու նման ծառայություն իրականացնելու պարտականությունից ... [եւ] կարող են պարտավորեցվել կատարել այլընտրանքային ծառայություն ... »:

55. 2010 թվականին Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ Rec(2010)4 հանձնարարականը՝ անդամ պետություններին առաջարկելով ապահովել զինված ուժերի անձնակազմի անդամների՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի ցանկացած սահմանափակման համապատասխանությունը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, եւ որ զինապարտներն իրավունք ունենան ստանալու կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձի կարգավիճակ եւ հնարավորություն ունենան իրականացնելու քաղաքացիական բնույթի այլընտրանքային ծառայություն: Նշված հանձնարարականի բացատրական հուշագրում, մասնավորապես, նշվել է.

«Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը դեռեւս Դատարանի կողմից չի ճանաչվել որպես Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ներքո պաշտպանվող իրավունք: Այնուամենայնիվ, միջազգային ֆորայում տիրող ներկայիս միտումի հիման վրա այն համարվում է խղճի եւ կրոնի ազատության իրավունքի անքակտելի մասը:»:

2. Եվրոպական միություն

ա) Եվրոպական խորհրդարան

56. Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից որդեգրված սկզբունքներն իրենց արտացոլումն են գտել նաեւ Եվրոպական խորհրդարանի 1983 թվականի փետրվարի 7-ի, 1989 թվականի հոկտեմբերի 13-ի, 1993 թվականի մարտի 11-ի եւ 1994 թվականի հունվարի 19-ի բանաձեւերում: Եվրոպական խորհրդարանը նույնպես համարել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ներառված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության հասկացության մեջ, եւ կոչ է արել Եվրոպական միության անդամ պետություններին ներառել այդ

իրավունքն իրենց իրավական համակարգերում՝ որպես հիմնարար իրավունք:

բ) Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա

57. Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 10-րդ հոդվածը, որն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2009 թվականի դեկտեմբերի 1-ին, սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի, քարոզչության, արարողությունների եւ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն:

2. Համոզմունքների հիմնավորմամբ ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվում է՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենքներին համապատասխան:»:

Բ. Այլ միջազգային փաստաթղթեր եւ պրակտիկա

1. Միավորված ազգերի կազմակերպություն

ա) Միավորված ազգերի կազմակերպության՝ Մարդու իրավունքների հանձնաժողով

58. Մարդու իրավունքների հանձնաժողովն իր թիվ 1987/46 բանաձեւում կոչ է արել պետություններին ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը եւ զերծ մնալ այդ իրավունքն իրացնող անձանց նկատմամբ ազատագրկման ձեռով պատիժ կիրառելուց: Իր մեկ այլ՝ թիվ 1989/59 բանաձեւում Հանձնաժողովը եւս մեկ քայլ առաջ է գնացել եւ ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ որպես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածով եւ Քաղաքացիական եւ քաղաքական

իրավունքների միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 18-րդ հոդվածով նախատեսված՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի իրավաչափ իրացում: Հետագայում խնդրի կապակցությամբ ընդունված մի շարք բանաձեւերով, մասնավորապես՝ թիվ 1993/84, 1995/83 եւ 1998/77 բանաձեւերով, հաստատվել եւ ընդլայնվել են առկա սկզբունքները: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովը շարունակաբար կոչ է արել պետություններին վերանայել իրենց օրենսդրությունները եւ իրավակիրառ պրակտիկան՝ նշված բանաձեւերի լույսի ներքո: Իր թիվ 2004/35 բանաձեւի մեջ Հանձնաժողովը քաջալերել է պետություններին շնորհել համաներումներ եւ վերականգնել այն անձանց իրավունքները, ովքեր կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվել են զինվորական ծառայությունից:

բ) ՔՔԻՄԴ եւ Միավորված ազգերի կազմակերպության՝ Մարդու իրավունքների կոմիտեի (ՄԱԿ-ի ՄԻԿ) պրակտիկան

59. ՔՔԻՄԴ-ի համապատասխան դրույթները, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին թիվ 2200 A (XXI) բանաձեւում եւ ուժի մեջ են մտել 1976 թվականի մարտի 23-ին, իսկ Հայաստանի կողմից վավերացվել են 1993 թվականի հունիսի 23-ին, ունեն հետեւյալ բովանդակությունը.

Հոդված 8

«3. ա) Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարել հարկադիր կամ պարտադիր աշխատանք ... :

գ) սույն կետում «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» հասկացության մեջ չեն ընդգրկվում. ...

ii) ռազմական բնույթի որեւէ ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ այդ հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց

համար օրենքով նախատեսված որևէ ծառայություն ... »:

Հոդված 18

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը, ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնն ու համոզմունքները դավանելու ազատությունը, պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների եւ վարդապետությունների իրականացման ազատությունը ... »:

60. ՄԱԿ-ի ՄԻԿ-ը, որը ՔՔԻՄԴ-ի կիրարկման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինն է, անհատական բողոքներ քննելիս ի սկզբանե համարել է, որ ՔՔԻՄԴ-ն եւ մասնավորապես 18-րդ հոդվածը, չեն նախատեսում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ հատկապես հաշվի առնելով 8-րդ հոդվածի 3(գ)(ii) կետը: Ֆինլանդիայի քաղաքացի՝ կրոնական համոզմունքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձի կողմից բերված բողոքը հայտարարվել է անընդունելի՝ ՔՔԻՄԴ-ի դրույթների հետ չհամապատասխանելու հիմքով (*L.S. Կ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [*L.T.K. v. Finland*], հաղորդագրություն թիվ 185/1984, UN doc. CCPR/C/25/D/185/1984, 1985 թվականի հուլիսի 9):

61. ՄԱԿ-ի ՄԻԿ-ի դիրքորոշման առաջին փոփոխությունը տեղի է ունեցել *Ջ.Փ.-ն ընդդեմ Կանադայի* [*J.P. v. Canada*] գործով (հաղորդագրություն թիվ 446/1991, UN doc. CCPR/C/43/D/446/1991) իր 1991 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ, որով *albeit obiter* (թեեւ ոչ պաշտոնապես) առաջին անգամ այն ընդունել է, որ «[ՔՔԻՄԴ] 18-րդ հոդվածն անկասկած [պաշտպանում է] կարծիքներ եւ համոզմունքներ ունենալու, արտահայտելու եւ տարածելու իրավունքը՝ ներառյալ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից եւ գործողություններից հրաժարվելու իրավունքը»:

62. 1993 թվականին ՄԱԿ-ի ՄԻԿ-ը 18-րդ հոդվածի վերաբերյալ ընդունել է իր թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը՝ ներկայացնելով, *inter alia*, այդ դրույթի հետեւյալ մեկնաբանությունը.

«11. ... Դաշնագիրն ուղղակիորեն չի նախատեսում համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, սակայն Կոմիտեն կարծում է, որ այդ իրավունքը բխում է 18-րդ հոդվածից, քանի որ մահացու ուժ կիրառելու հետ կապված պարտականությունները կարող են լուրջ հակասության մեջ լինել խղճի ազատության եւ կրոնը կամ համոզմունքը դավանելու իրավունքի հետ ... »:

63. ՄԱԿ-ի ՄԻԿ-ն առավել զարգացրել է իր դիրքորոշումը 2006 թվականի նոյեմբերի 3-ին *Յո-Բոմ Յունն ընդդեմ Կորեայի Հանրապետության* [*Yeo-Bum Yoon v. Republic of Korea*] եւ *Մայոնգ-Յին Չուին ընդդեմ Կորեայի Հանրապետության* [*Myung-Jin Choi v. Republic of Korea*] գործերով (հաղորդագրություններ թիվ 1321/2004 եւ 1322/2004, UN doc. CCPR/C/88/D/1321-1322/2004, 2007 թվականի հունվարի 23) կայացրած որոշումներում, որտեղ այն առաջին անգամ քննել է երկու դատապարտված Եհովայի վկաների բողոքները՝ բերված այն պետության դեմ, որը չէր ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: ՄԱԿ-ի ՄԻԿ-ը որոշել է հետեւյալը.

«8.2. Կոմիտեն ... նշում է, որ Դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետը «պարտադիր եւ հարկադիր աշխատանք» հասկացության մեջ չի ներառում «ռազմական բնույթի որեւէ ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ այդ հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված որեւէ ծառայություն»: Սա նշանակում է, որ Դաշնագրի 8-րդ հոդվածը ինքնին ոչ ճանաչում է ոչ էլ բացառում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Այսպես, նշված բողոքը պետք է դիտարկվի բացառապես Դաշնագրի 18-րդ հոդվածի լույսի ներքո, որի ընկալումը ժամանակի ընթացքում իր բովանդակության եւ նպատակի առումներով զարգանում է, ինչպես Կոնվենցիայով նախատեսված ցանկացած այլ երաշխիք:

8.3. ... [անձանց] դատապարտելը եւ պատժի ենթարկելը, հետեւաբար, սահմանափակում է իրենց կրոնն ու հավատքն արտահայտելու նրանց հնարավորությունը: Նման սահմանափակումը պետք է արդարացված լինի 18-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված թույլատրելի սահմաններով, այսինքն՝ ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով եւ անհրաժեշտ լինի հասարակական անվտանգության, կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլոց հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: ...»:

64. ՄԱԿ-ի ՄԻԿ-ը եզրահանգել է այն դիտարկմամբ, որ դիմումատուների՝ 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտությունն անհրաժեշտ չի եղել, եւ որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

զ) Կամայական կալանքների հարցերով աշխատանքային խումբ

65. Մի շարք դեպքերում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կալանքների հետ կապված հարցերն անհատական բողոքների ընթացակարգով քննարկվել են նաեւ Կամայական կալանքների հարցերով աշխատանքային խմբի կողմից, որը հիմնադրվել է 1991 թվականին Միացյալ ազգերի կազմակերպության՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից: Մինչ վերջերս Աշխատանքային խմբի հիմնական մտահոգությունը եղել են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կրկնվող պատիժներն ու ազատազրկումները, որոնք կամայական էին, քանի որ խախտում էին *ne bis in idem* (*նույն արարքի համար կրկին չդատվելու*) սկզբունքը (տե՛ս, օրինակ, Կարծիք թիվ 36/1999 (Թուրքիա) եւ Կարծիք թիվ 24/2003 (Իսրայել)): 2008 թվականին Աշխատանքային խումբը գնացել է մեկ քայլ առաջ եւ Թուրքիայի վերաբերյալ մեկ գործով գտել, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձը հետապնդվել, դատապարտվել եւ ազատազրկվել է կամայականորեն (տե՛ս, Կարծիք թիվ 16/2008 (Թուրքիա)):

2. Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան համակարգ

66. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(բ) կետը եւ 12-րդ հոդվածը նման են Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետին եւ 9-րդ հոդվածին:

67. 1997 եւ 1998 թվականներին Մարդու իրավունքների միջամերիկյան

հանձնաժողովն ընդունել է հանձնարարականներ, որոնցով հրավիրել է այն անդամ պետություններին, որոնց օրենսդրություններով դեռևս չէր ճանաչվել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց՝ զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից ազատվելու իրավունքը, վերանայել իրենց իրավական համակարգը եւ կատարել փոփոխություններ մարդու իրավունքների առնչությամբ միջազգային իրավունքին համահունչ՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով նախատեսելով այդ իրավունքը կրող անձանց համար զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորություն:

68. 2005 թվականի մարտի 10-ին Միջամերիկյան հանձնաժողովը կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի առնչությամբ ներկայացված անհատական բողոքի կապակցությամբ առաջին անգամ կայացրել է որոշում: Հանձնաժողովը գտել է, որ 12-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի 6-րդ հոդվածի 3(բ) կետի հետ համակցությամբ եւ եզրահանգել, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը պաշտպանվում էր Ամերիկյան կոնվենցիայի ներքո միայն այն երկրներում, որտեղ այդ իրավունքը ճանաչվել էր: Նման եզրահանգում կատարելիս Միջամերիկյան հանձնաժողովը հիմնականում հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի եւ մինչեւ 2005 թվականը գործող՝ ՄԱԿ-ի ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի վրա (տե՛ս, *Քրիստիան Ղանիել Սահլի Վերան եւ այլք ընդդեմ Չիլիի* [*Cristián Daniel Sahli Vera and Others v. Chile*], գործ թիվ 12.219, Զեկույց թիվ 43/05, 2005 թվականի մարտի 10, §§ 95-97): Այդ մոտեցումը հետագայում հաստատվել է Միջամերիկյան հանձնաժողովի կողմից՝ մեկ այլ գործով (տե՛ս, *Ալֆրեդո Դիազ Բուստոսն ընդդեմ Բոլիվիայի* [*Alfredo Diaz Bustos v. Bolivia*], գործ թիվ 14/04, Զեկույց թիվ 97/05, 2005 թվականի հոկտեմբերի 27, § 19):

3. Երիտասարդների իրավունքների վերաբերյալ Իբերոամերիկյան

կոնվենցիա

69. Իբերոամերիկյան երիտասարդական կազմակերպության շրջանակներում 2005 թվականի հոկտեմբերի 10-11-ն ընդունվել է Երիտասարդների իրավունքների վերաբերյալ Իբերոամերիկյան կոնվենցիան, որը սահմանում է մի շարք հատուկ իրավունքներ 15-ից 24 տարեկան անհատների համար: Դրա՝ «Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք» վերնագրված 12-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Երիտասարդներն իրավունք ունեն հրաժարվելու զինվորական ծառայությունից՝ իրենց կրոնական համոզմունքների հիման վրա:

2. Կողմ պետությունները պարտավորվում են ընդունել այդ իրավունքի իրականացումը երաշխավորող համապատասխան իրավական միջոցներ եւ քայլեր ձեռնարկել՝ պարտադիր զինվորական ծառայության համակարգի վերացման ուղղությամբ

...»:

*4. Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության
կազմակերպություն (ԵԱՀԿ)*

70. ԵԱՀԿ-ն նույնպես 1990 թվականին անդրադարձել է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու հարցին: Մասնակից պետությունները «Մարդկային չափանիշները» թեմայով համաժողովում նշել են, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը ճանաչել է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, եւ պայմանավորվել են իրենց օրենսդրական համակարգերում նախատեսել այլընտրանքային ծառայության տարբեր ձևեր: 2004 թվականին ԵԱՀԿ-ն մշակել է «Կրոնի եւ համոզմունքների վերաբերյալ օրենսդրության վերանայման ուղեցույց», որում նշել է, որ չնայած սույն խնդրի առնչությամբ գոյություն չունի վերահսկող միջազգային չափանիշ,

այնուամենայնիվ, ժողովրդավարական շատ պետություններում կա հստակ միտում՝ թույլատրելու իսկական բարոյական եւ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց զինվորական ծառայության փոխարեն իրականացնել այլընտրանքային (ոչ զինվորական) ծառայություն:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՅԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

71. Դիմումատուն բողոքել է, որ բանակում ծառայելուց հրաժարվելու համար իրեն դատապարտելու հետեւանքով խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների:»:

Ա. Պալատի վճիռը

72. Պալատն իր 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճռում առաջին հերթին նշել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունն ընդունել է օրենքներ, որոնցով նախատեսվում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայության հնարավորությունը: Այնուամենայնիվ,

Կոնվենցիայի 9-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի¹ լույսի ներքո, որը Պայմանավորվող կողմերի հայեցողությանն է թողնում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց իրավունքների ճանաչման հարցը: Այսպես, այն փաստը, որ Պայմանավորվող կողմերի մեծամասնությունը ճանաչել է այդ իրավունքը, չի նշանակում, որ մեկ այլ Պայմանավորվող կողմ, որը չի ճանաչել այդ իրավունքը, խախտել է Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները: Հետևաբար այս գործոնը չի կարող համարվել արդյունավետ՝ Կոնվենցիայի զարգացող մեկնաբանման համար: Պալատը գտել է, որ նման հանգամանքներում 9-րդ հոդվածը չի երաշխավորում կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը եւ, հետևաբար, կիրառելի չէ դիմումատուի գործով: Այն եզրահանգել է, որ հաշվի առնելով, որ 9-րդ հոդվածը կիրառելի չէ, չի կարող համարվել, որ դիմումատուին իր զինվորական պարտականությունը կատարելուց հրաժարվելու համար դատապարտելով պետական մարմինները խախտել են իրենց կոնվենցիոն պարտավորությունները:

Բ. Կողմերի փաստարկները

1. Դիմումատուն

ա) 9-րդ հոդվածի կիրառելիությունը

73. Դիմումատուն նշել է, որ Պալատը, հրաժարվելով կիրառել «կենդանի փաստաթուղթ» դոկտրինը, ընդհանրացրել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից տրված մեկնաբանությունն այն առումով, որ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը սահմանափակում է 9-րդ հոդվածի կիրառելիությունը կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական

¹ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համապատասխան մասերով սահմանվում է. «2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք: 3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝ ... բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը, ...»

ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ՝ առանց հիմնավորման կամ բացատրության: Սակայն 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը չի կարող իրավաչափորեն վկայակոչվել՝ 9-րդ հոդվածի ներքո նախատեսված՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը հերքելու համար, հատկապես Հայաստանի դեպքում, որը 2000 թվականից սկսած իրավաբանորեն ստանձնել է ճանաչել նշված իրավունքը: Հիմնվելով *Travaux préparatoires* վրա՝ դիմումատուն պնդել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը 9-րդ հոդվածի հետ համակցությամբ մեկնաբանելը երբեք նախատեսված չի եղել: Դրա միակ նպատակը եղել է 4-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված իրավունքի սահմանումը, եւ այն երբեք նպատակ չի հետապնդել ճանաչել կամ հերքել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը չի կիրառվել Կոնվենցիայի այլ դրույթների նկատմամբ, եւ չկա նաեւ պատճառ այն 9-րդ հոդվածի նկատմամբ կիրառելու: Եթե 9-րդ հոդվածը նախատեսված չի եղել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ կիրառելու համար, ապա նման սահմանափակումը կարող էր հեշտությամբ ներառվել Կոնվենցիայի նախագիծը կազմողների կողմից: Հետեւաբար կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը որոշելիս Դատարանը չպետք է բխեցներ Կոնվենցիայից մի իրավունք, որն ի սկզբանե նախատեսված չի եղել:

74. Ըստ դիմումատուի՝ 9-րդ հոդվածի իմաստով կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչմանը նպաստել են ներկայիս հանգամանքները՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի գրեթե բոլոր անդամ պետությունների կողմից այս իրավունքի աստիճանաբար ճանաչման փաստը: Այս միասնական մոտեցումն իր արտացոլումը գտել է նաեւ Եվրոպայի խորհրդի եւ Եվրոպական միության մարմինների որդեգրած դիրքորոշումներում: Ավելին, այս իրավունքի ճանաչումը դարձել է Եվրոպայի խորհրդին անդամակցելու ցանկություն արտահայտած նոր անդամ պետությունների համար պարտադիր նախապայման: Բացի դրանից, Պալատը հաշվի չի առել նաեւ Միացյալ ազգերի կազմակերպության

կառույցներում սույն խնդրի վերաբերյալ կարելուր զարգացումները, մասնավորապես ՄԱԿ-ի ՄԻԿ-ի կողմից ՔՔԻՄԴ-ով նախատեսված նմանատիպ դրույթների մեկնաբանությունը: Անհրաժեշտ էր հստակեցնել սույն խնդրի վերաբերյալ Դատարանի դիրքորոշումը, քանի որ ոչ թե Դատարանը, այլ Հանձնաժողովն է մերժել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառումը: Ավելին, Պալատի կողմից Հանձնաժողովի դիրքորոշման վկայակոչումը տեղին չէր, քանի որ այն չէր համապատասխանում Կոնվենցիայի խնդրին եւ նպատակին, բացի այդ այն հակասական է, քանի որ վիճարկվող իրավունքի ճանաչման միտումը նկատվում է նույնիսկ Հանձնաժողովի նշված դիրքորոշման մեջ: Դիմումատուն, ի վերջո, պնդել է, որ խնդիրը դուրս էր եկել իր գործի շրջանակներից, քանի որ այն առաջացրել էր լուրջ հետեւանքներ՝ ազդելով Եվրոպայի խորհրդի սահմաններում եւ դրանից դուրս ողջ աշխարհում նման իրավիճակում գտնվող հարյուրավոր այլ երիտասարդների վրա:

բ) 9-րդ հոդվածին համապատասխանությունը

75. Դիմումատուն նշել է, որ իր դատապարտումը հանգեցրել է միջամտության իր կրոնական համոզմունքներն իրականացնելու իրավունքին: Այս միջամտությունը նախատեսված չէր օրենքով, քանի որ Հայաստանի իշխանությունները, դատապարտելով իրեն, խախտել են Եվրոպայի խորհրդին անդամակցելու ժամանակ ստանձնած՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող հանձնառությունը, մասնավորապես՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող՝ ազատագրկման դատապարտված բոլոր անձանց ներում շնորհելը: Նշված միջազգային պարտավորությունը դարձել է Հայաստանի ազգային օրենսդրության անբաժանելի մասը, հետեւաբար, բոլոր այն անձինք, ովքեր հրաժարվել էին զինվորական ծառայություն իրականացնելուց՝ կրոնական համոզմունքների հիմքով, կարող էին հիմնավոր ակնկալիք ունենալ, որ կազատվեն այդ պարտականությունից կամ, ի վերջո,

հնարավորություն կունենան անցնելու այլընտրանքային քաղաքացիական ծառայություն: Արդյունքում, ներպետական օրենքը բավարար չափով ճշգրիտ չէր, քանի որ այն չէր համապատասխանեցվել Հայաստանի կողմից ստանձնած՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող միջազգային հանձնառություններին:

76. Դիմումատուն, այնուհետև, նշել է, որ միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով նաև այն պատճառով, որ Հայաստանը, 1993 թվականին անդամակցելով ՔՔԻՄԴ-ին, հավատարիմ չի եղել դրա 18-րդ հոդվածին եւ ՄԱԿ-ի ՄԻԿ-ի համապատասխան նախադեպային իրավունքին՝ ինչպես պահանջվում էր «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով (տես վերելում՝ 44-րդ պարբերությունը):

77. Դիմումատուն նաև պնդել է, որ միջամտությունն անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Նախ, այն փաստը, որ դիմումատուն, հանդիսանալով կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձ, ով պարտավորվել էր ապրել խաղաղ պայմաններում իր հարեւանների հետ եւ չուներ դատվածություն, ազատագրվել էր, եւ նրան վերաբերվում էին որպես վտանգավոր հանցագործի, ամենեւին անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում: Մասնավորապես, նա ենթարկվել էր հետապնդումների, այնուհետև ձերբակալվել էր եւ տարբեր հանցագործությունների համար կալանավորված վեց այլ անձանց հետ պահվել էր միեւնույն խցում՝ առանց անկողնային պարագաների, ինչպես նաև պահակների կողմից ենթարկվել էր վիրավորանքների: Այնուհետև, դիմումատուն ենթարկվել էր ամբողջովին անհամաչափ պատժի եւ վերաբերմունքի՝ հաշվի առնելով այն փաստը, որ նա ընդամենը փորձել էր իրացնել խղճի, մտքի եւ կրոնի ազատության իր հիմնարար իրավունքը: Եվ երրորդ, դիմումատուի ազատագրվումը նույնպես արդարացված չէր, քանի որ Հայաստանի իշխանությունները ներում էին շնորհել համանման իրավիճակում հայտնված այլ անհատների: Վերջապես, երկրի զինվորական պաշտպանությունը չէր տարալուծվի եւ թուլանա, եթե նրա նման մարդիկ չպատժվեին: Մասնավորապես, 2007 թվականին Հայաստանում գրանցված էին 125 000 առկա զինվորական ծառայողներ եւ 551 000 պոտենցիալ

զինվորական ծառայողներ, մինչդեռ միայն 41 Եհովայի վկաներ էին ազատագրվել: Ավելին, 2002 թվականից ի վեր, այլ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող միայն երեք անհատներ էին որոշել հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից: Թվային նման ոչ մեծ ցուցանիշները չէին կարող բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի ռազմական կարողության վրա:

2. Կառավարությունը

ա) 9-րդ հոդվածի կիրառելիությունը

78. Կառավարությունը նշել է, որ Կոնվենցիայով եւ Հայաստանի Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները, այդ թվում՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը, պետք է հավասարապես եւ առանց խտրականության կիրառվեն բոլորի նկատմամբ: Դիմումատուն, ով Հայաստանի քաղաքացի էր, Սահմանադրության համաձայն պարտավոր էր անցնել պարտադիր զինվորական ծառայություն՝ անկախ իր կրոնական համոզմունքներից, եւ այդ պարտականության կատարումը չէր կարող դիտարկվել որպես իր իրավունքներին միջամտություն: Օրենքով զինվորական ծառայությունից ազատվելու այնպիսի հիմքեր, ինչպիսին Եհովայի վկա լինելն է, չեն նախատեսվում: Ուստի, օրենքով չնախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելը կլիներ խտրականության բացառման եւ հավասարության սկզբունքի խախտում:

79. Կառավարությունը համաձայնվել է է, որ Կոնվենցիան «կենդանի փաստաթուղթ» է: Սակայն տվյալ գործի նկատմամբ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը պետք է դիտարկվի Կոնվենցիայի՝ տվյալ պահի դրությամբ գործող մեկնաբանությամբ: Դիմումատուն դատապարտվել է 2001-2002 թվականներին, եւ այդ ժամանակ նրա դատապարտումը համապատասխանել է միջազգային համայնքի մոտեցումներին եւ Կոնվենցիայի իմաստով եղել է օրինական եւ հիմնավոր, ինչպես մեկնաբանվել է Հանձնաժողովի եւ Դատարանի կողմից: Մասնավորապես, *Փիթրսն ընդդեմ Նիդեռլանդների* [*Peters v. the Netherlands*] (թիվ 22793/93, Հանձնաժողովի՝ 1994 թվականի նոյեմբերի 30-ի

որոշում, չհրապարակված) եւ *Հոդենսն ընդդեմ Բելգիայի* [*Heudens v. Belgium*] (թիվ 24630/94, Հանձնաժողովի՝ 1995 թվականի մայիսի 22-ի որոշում, չհրապարակված) գործերով, որոնք քննարկվող հարցի վերաբերյալ վերջին որոշումներն էին, Հանձնաժողովը գտել է, որ 9-րդ հոդվածով երաշխավորված՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը չի վերաբերում կրոնական կամ քաղաքական համոզմունքների հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելուն: Իր վերջերս կայացրած վճիռներում, որտեղ գտել է, որ չկա անհրաժեշտություն քննության առնելու վիճարկվող հարցը, Դատարանն անգամ չի ընդունել 9-րդ հոդվածի կիրառելիության փաստը (տես, օրինակ, *Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Thlimmenos v. Greece* [GC]], թիվ 34369/97, § 43, ՄԻԵԴ 2000-IV, եւ *Ուլկեն ընդդեմ Թուրքիայի* [*Ülke v. Turkey*], թիվ 39437/98, §§ 53-54, 2006 թվականի հունվարի 24): Հայաստանի իշխանությունները, հետեւաբար, գործել են Կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով տվյալ հարցի վերաբերյալ նախադեպային իրավունքը՝ նրանք չէին կարող կանխատեսել Դատարանի կողմից 9-րդ հոդվածին նոր մեկնաբանություն տալու հնարավորությունը եւ, հետեւաբար, չէին կարող իրենց գործողությունները համապատասխանեցնել այդ հնարավոր «նոր մոտեցմանը»:

80. Կառավարությունն ընդունել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունն ընդունել է օրենքներ, որոնցով նախատեսվում են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայության տարբեր ձևեր: Այնուամենայնիվ, 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, որոնցով կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչումը հստակորեն թողնվում է Պայմանավորվող կողմերի հայեցողությանը, չեն կարող անտեսվել, եւ այն փաստը, որ անդամ պետությունների մեծ մասը ճանաչել է այդ իրավունքը, չի կարող հիմք հանդիսանալ այն մոտեցման համար, համաձայն որի այն Պայմանավորվող կողմը, որը չի ճանաչել այդ իրավունքը, խախտել է Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները: Ամփոփելով կարելի է ասել, որ 9-րդ հոդվածը 4-րդ

հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի լույսի ներքո մեկնաբանմամբ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը չի երաշխավորվում, ինչպես նաև դիմումատուի՝ 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն տեղի չի ունեցել:

81. Կառավարությունը նաև նշել է, որ այդ պահին Հայաստանում գրանցված են եղել մոտ վաթսուն կրոնական կազմակերպություններ, այդ թվում՝ «Եհովայի վկաներ» կազմակերպությունը, կրոնական կազմակերպությունների ինը մասնաճյուղեր եւ մեկ գործակալություն: Այսպես, եթե նրանցից յուրաքանչյուրը պնդի, որ զինվորական ծառայությունը դեմ է իրենց կրոնական համոզմունքներին, ապա կառաջանա մի իրավիճակ, որում ոչ միայն «Եհովայի վկաներ»-ի անդամները, այլ նաև մյուս կրոնական կազմակերպությունները հնարավորություն կստանան հրաժարվելու իրենց հայրենիքը պաշտպանելու պարտականությունից: Ավելին, «Եհովայի վկաներ»-ի կամ այլ կրոնական կազմակերպությունների անդամները կարող են հավասարապես պնդել, որ, օրինակ, հարկեր եւ տուրքեր վճարելը դեմ է իրենց կրոնական համոզմունքներին, եւ պետությունը պարտավոր է չդատապարտել իրենց, քանի որ դա կառաջացնի Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում: Նման մոտեցումն անընդունելի է նաև այն տեսանկյունից, որ պետության հանդեպ իրենց պարտականությունները կատարելուց խուսափելու համար անձը կարող է դառնալ այս կամ այն կազմակերպության անդամ:

82. Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդին անդամակցելիս Հայաստանի ստանձնած պարտավորություններին, ապա Կառավարությունը պնդել է, որ 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը: Իշխանությունները, հետեւաբար, ընդունել են կրոնական հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորությունը՝ միաժամանակ համոզմունքների հիմնավորմամբ ծառայությունից հրաժարվող անձանց համար նախատեսելով նրանց սահմանադրական պարտականությունը կատարելու այլընտրանքային եղանակ: Ուստի, ներկայումս համոզմունքների հիմնավորմամբ ծառայությունից հրաժարվող անձինք դատապարտվում են միայն այն դեպքում,

երբ նրանք այլընտրանքային ծառայություն կատարելուց եւս հրաժարվում են: Ինչ վերաբերում է համոզմունքների հիմնավորմամբ ծառայությունից հրաժարված բոլոր ազատագրկման դատապարտված անձանց ներում շնորհելու պարտավորությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ իշխանությունները կատարել են նշված պարտավորությունը՝ ազատելով դիմումատուին նշանակված պատիժը կրելուց: Մասնավորապես, երկու տարի եւ վեց ամիս ժամկետով ազատագրկման դատապարտվելուց հետո դիմումատուն ազատվել է՝ Վճռաբեկ դատարանի որոշումը կայացվելուց վեց ամիս հետո:

բ) 9-րդ հոդվածին համապատասխանությունը

83. Կառավարությունը նշել է, որ եթե նույնիսկ ենթադրենք, որ տեղի է ունեցել դիմումատուի՝ 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն, ապա այն եղել է արդարացված: Նախ, միջամտությունը նախատեսված է եղել օրենքով: Մասնավորապես, յուրաքանչյուր 18-ից 27 տարեկան, ֆիզիկապես պիտանի ՀՀ քաղաքացի պարտավոր է ծառայել հայկական բանակում՝ անկախ իր կրոնական համոզմունքներից, ինչպես նախատեսված է ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածով եւ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ եւ 11-րդ հոդվածներով: Ավելին, Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը սահմանում է պատիժ գորակոչից խուսափելու համար: Նշված իրավական դրույթները եղել են մատչելի եւ բավարար չափով հստակ: Ավելին, տվյալ պահին կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչված չի եղել Հայաստանի օրենսդրությամբ:

84. Բացի այդ, միջամտությունը եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Այն հանդիսանում է ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, երբ բոլոր քաղաքացիներն առանց որեւէ հիմքով խտրականության օժտված են Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված իրավունքներով ու ազատություններով եւ կրում են դրանցով սահմանված պարտականությունները: Այսպիսով, հասարակական կարգին լուրջ վտանգ կսպառնա, եթե իշխանությունները թույլատրեն վերը նշված

60-ից ավելի կրոնական կազմակերպություններին մեկնաբանել տվյալ պահին ուժի մեջ գտնվող օրենքը եւ ենթարկվել դրանց՝ ըստ իրենց համապատասխան կրոնական հավատալիքների: Այդ հանգամանքներում իշխանությունների կարեւորագույն խնդիրներից էր ապահովել օրենքի միատեսակ կիրառումը Հայաստանի բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց կրոնից, ինչը չպետք է դիտարկվի որպես Կոնվենցիայի պահանջներին հակասող միջամտություն:

3. Ներգրավված երրորդ կողմերը

ա) «Միջազգային համաներում» կազմակերպության, «Խղճի եւ խաղաղության հարկ» միջազգային կազմակերպության, Խորհրդատվության հարցերով ընկերների համաշխարհային կոմիտեի, Իրավաբանների միջազգային հանձնաժողովի եւ «Պատերազմի հակառակորդներ» միջազգային կազմակերպության համատեղ դիտարկումները

85. Որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպությունները ներկայացրել են միջազգային եւ տարածաշրջանային մակարդակներում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի աստիճանական ճանաչման վերաբերյալ ընդհանուր դիտարկում: Միջազգային մակարդակում նրանք, մասնավորապես, ուշադրության են արժանացրել ՄԱԿ-ի ՄԻԿ-ի իրավակիրառ պրակտիկայի զարգացումները եւ վերջինիս կողմից ՔՔԻՄԴ-ի համանման դրույթների վերաբերյալ արված մեկնաբանությունները, մասնավորապես, դրա թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը եւ *Յո-Բոմ Յունի* եւ *Մայոնգ-Ցին Չուիի* գործերը (տես վերելում՝ 62-64-րդ պարբերությունները): Այնուհետեւ նրանք վկայակոչել են Միավորված ազգերի կազմակերպության այլ կառույցների կողմից մշակված զարգացումները, ինչպիսիք են Մարդու իրավունքների հանձնաժողովը եւ Կամայական կալանքների հարցերով աշխատանքային խումբը (տես վերելում՝ 58-րդ եւ 65-րդ պարբերությունները):

86. Տարածաշրջանային մակարդակում՝ որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպություններն անդրադարձել են Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից մշակված զարգացումներին, մասնավորապես նրանց հանձնարարականներին, որոնք վերաբերում էին կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչմանն ու դրա առավել մեծ պաշտպանվածության ապահովման հարցերին (տես վերելում՝ 51-55-րդ պարբերությունները): Նրանք նաև նշել են, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը հստակորեն ճանաչվել է Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 10-րդ հոդվածով եւ Երիտասարդների իրավունքների վերաբերյալ Իբերոամերիկյան կոնվենցիայի 12-րդ հոդվածով (տես վերելում՝ 57-րդ եւ 69-րդ պարբերությունները): Եվ վերջապես, 2005 թվականին Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը, հաստատելով խնդրի բարեկամական կարգավորում դիմումատուի եւ Բոլիվիայի միջեւ, ճանաչեց կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի յուրահատուկ բնույթը եւ հստակորեն վկայակոչեց ՄԱԿ-ի ՄԻԿ-ի թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը (տես վերելում՝ 68-րդ պարբերությունը):

87. Որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպությունները, այնուհետեւ, նշել են, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասը չի նախատեսում ազգային անվտանգությունից ելնելով անձի կրոնական կամ այլ համոզմունքների արտահայտման ազատության սահմանափակումներ: Նրանք ընդգծել են, որ վերը նշված *Յո-Բոմ Յունի եւ Մայոնգ-Յին Չուիի* գործերում ՄԱԿ-ի ՄԻԿ-ը, գտնելով, որ տեղի է ունեցել դիմումատուների՝ ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն, եզրահանգել է, որ միջամտությունը չի եղել անհրաժեշտ, եւ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

88. Որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպությունները պնդել են, որ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի գրեթե համընդհանուր ճանաչումը եւ ՄԱԿ-ի ՄԻԿ-ի վերը

ներկայացված դիտարկումները, պետության կողմից կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար որեւէ պայման չնախատեսելը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ոչ արդարացված միջամտություն է: Նրանք, ի վերջո, հիմք ընդունելով *Ցիրլիսը եւ Կուլումպասն ընդդեմ Հունաստանի* [*Tsirlis and Kouloumpas v. Greece*] (1997 թվականի մայիսի 29, *Վճիռների եւ որոշումների մասին գեկույցներ* 1997-III) եւ *Թլիմենոսի* (վերետում հիշատակված) գործերով չհամընկնող կարծիքները, նշել են, որ նույնիսկ Հանձնաժողովի մոտեցումը վիճարկվող խնդրի վերաբերյալ տարիների ընթացքում փոխվել է: Վերը նշվածն ամբողջությամբ նպաստել է 9-րդ հոդվածի իմաստով կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի պաշտպանությանը:

դ) Եհովայի քրիստոնյա վկաների եվրոպական ասոցիացիա

89. Որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպությունը նշել է, որ «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը հայտնի քրիստոնեական կառույց է, որը քարոզում է բարձր բարոյական չափանիշներ, ներառյալ՝ մարդու դեմ գենք կիրառելուց հրաժարվելու սկզբունքը: Նրանք ընդունում են այլընտրանքային ազգային ծառայության տարբերակն այն պայմանով, որ դա չհակասի իրենց հիմնական արժեքներին, այսինքն բացառվի զինվորական ներկայացուցիչների կողմից ղեկավարումը կամ զինվորական գործունեությանը կամ նպատակներին ուղղված լինելը: Իրենց կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար Եհովայի վկաները պատմականորեն ենթարկվել են տարբեր տեսակի պատիժների, հատկապես պատերազմների ժամանակ: Սակայն եվրոպական մի շարք երկրներում հետպատերազմյան զարգացումները հանգեցրել են այլընտրանքային քաղաքացիական ծառայության աստիճանական ճանաչմանը եւ պարտադիր զինվորական ծառայության համակարգի վերջնական վերացմանը:

90. Կազմակերպությունը, այնուհետեւ, նշել է, որ Հայաստանում գոյություն

չուներ առանց զինվորական հսկողության եւ վերահսկողության իսկական այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, եւ երիտասարդ Եհովայի վկաները, իրենց համոզմունքներից ելնելով, շարունակում էին դիմադրել նման ծառայությանը եւ ազատագրկվում էին: 2002 թվականից մինչեւ 2010 թվականը 273 մարդ դատապարտվել է ազատագրկման, իսկ ներկայումս 72 մարդ կրում են իրենց պատիժը, որի ժամկետը տատանվում է 24-ից 36 ամիսների միջեւ: Այս մարդիկ ենթարկվել են նաեւ հետապնդման այլ ձեւերի, ինչպիսին է, օրինակ, անձնագիրը չտրամադրելը, առանց որի անհնար կլինի աշխատել, բացել բանկային հաշիվ կամ նույնիսկ ամուսնանալ:

91. Եզրակացնելով՝ որպես երրորդ կողմ ներգրավված կազմակերպությունը կոչ է արել Մեծ Պալատին կիրառել «կենդանի փաստաթուղթ» դոկտրինը եւ համապատասխանեցնել նախադեպային իրավունքը ներկայիս հանգամանքներին: Այն պնդել է, որ անդամ պետություններում գործող՝ պաշտպանություն իրականացնելու հրամայականն այլեւս կիրառելի չէ այս խնդրի վերաբերյալ ավելի վաղ կայացված որոշումներում գերակայող մակարդակում, իսկ անդամ պետություններն ազգային պարտադիր ծառայությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը կարող են բավարարել առանց 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները ոտնահարելու:

Գ. Դատարանի գնահատականը

1. 9-րդ հոդվածի կիրառելիությունը

92. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի գործի նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը՝ վկայակոչելով Հանձնաժողովի նախադեպային իրավունքը, մինչդեռ դիմումատուն եւ որպես երրորդ կողմ ներգրավվածները պնդել են, որ այդ նախադեպային իրավունքը հնացած է, եւ խնդրել են համապատասխանեցնել այն ներկայիս հանգամանքներին:

ա) Համապատասխան նախադեպային իրավունքի ամփոփումը

93. Դատարանը նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախնական դիրքորոշումն արտացոլվել է *Գրանդրաթն ընդդեմ Գերմանիայի* [*Grandrath v. Germany*] (թիվ 2299/64, Հանձնաժողովի՝ 1966 թվականի դեկտեմբերի 12-ի գեկույց, Տարեկան ամփոփագիրք 10, էջ 626) գործում, որը վերաբերում էր «Եհովայի վկաներ» կազմակերպության անդամին, ով ցանկանում էր ազատվել ոչ միայն զինվորական, այլ նաև դրան փոխարինող քաղաքացիական ծառայությունից: Նա պնդել է, որ խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածն այն հիմքով, որ իշխանությունները ստիպել են իրեն իրականացնել մի ծառայություն, որը դեմ է իր խղճին եւ կրոնական համոզմունքներին, եւ այդ ծառայության կատարումից հրաժարվելու համար պատժել են դիմումատուին: Հանձնաժողովն ի սկզբանե նկատել է, որ թեեւ 9-րդ հոդվածն ընդհանուր առմամբ երաշխավորում էր մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը, Կոնվենցիայի 4-րդ հոդվածը պարունակում էր դրույթ, որը հստակորեն վերաբերում էր կրոնական համոզմունքներ ունեցող անձանց պարագայում զինվորական ծառայությունն այլ պարտադիր ծառայությամբ փոխարինելու հարցին: Այն եզրահանգել է, որ, քանի որ 4-րդ հոդվածով միանշանակ ճանաչվում է, որ կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ զինվորական ծառայության փոխարեն կարող է կիրառվել քաղաքացիական ծառայությունը, համոզմունքներից հրաժարվելը, Կոնվենցիայի իմաստով, չի կարող հիմք հանդիսանալ՝ անձին նման ծառայությունից ազատելու համար: Հանձնաժողովը հարկ չի համարել քննարկել 9-րդ հոդվածում օգտագործվող «խղճի եւ կրոնի ազատություն» եզրույթի մեկնաբանության հարցը եւ եկել է այն եզրահանգման, որ այդ դրույթը՝ առանձին վերցրած, չի խախտվել:

94. Նույն կերպ, *Գ.Զ.-ն ընդդեմ Ավստրիայի* [*G.Z. v. Austria*] (թիվ 5591/72, Հանձնաժողովի՝ 1973 թվականի ապրիլի 2-ի որոշում, Ժողովածու 43, էջ 161) գործով Հանձնաժողովը նշել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը մեկնաբանելիս այն հաշվի է առել նաև Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի դրույթը, համաձայն որի պարտադիր կամ հարկադիր աշխատանքը չի ներառում

«զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը»: 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում «այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում» արտահայտությունը ներառելով՝ Բարձր պայմանավորվող կողմերի ընտրությանն է թողնվել՝ ճանաչել, թե չճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, իսկ ճանաչելու դեպքում՝ նախատեսել, թե չնախատեսել փոխարինող ծառայության տեսակ: Հանձնաժողովը, այդ պատճառով, գտել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, ելնելով 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի որակումից, չի պարտավորեցնում պետությանը ճանաչել կրոնական համոզմունքի հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը եւ, հետեւաբար, նախատեսել հատուկ գործողություններ՝ իրենց մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքն իրացնելու համար այնքանով, որքանով դա ազդեցություն է ունենում նրանց պարտադիր զինվորական ծառայության վրա: Հետեւաբար, նշված հոդվածները չեն արգելում այն պետությանը, որը չի ճանաչել նշված իրավունքը, պատժել այն անձանց, որոնք հրաժարվում են զինվորական ծառայություն իրականացնելուց:

95. Այդ մոտեցումն այնուհետեւ հաստատվել է Հանձնաժողովի կողմից *Իքսն ընդդեմ Գերմանիայի* [*X v. Germany*] գործով, որը վերաբերում էր դիմումատուի կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունը քաղաքացիական ծառայությամբ փոխարինելու հարցին (թիվ 7705/76, Հանձնաժողովի՝ 1977 թվականի հուլիսի 5-ի որոշում, Որոշումներ եւ զեկույցներ (DR) 9, էջ 201): *Համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվողներն ընդդեմ Դանիայի* [*Conscientious objectors v. Denmark*] (թիվ 7565/76, Հանձնաժողովի՝ 1977 թվականի մարտի 7-ի որոշում, DR 9, էջ 117) գործով Հանձնաժողովը կրկին նշել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ներառված չէ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների եւ ազատությունների շարքում:

Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի [*A. v. Switzerland*] (թիվ 10640/83, Հանձնաժողովի՝ 1984 թվականի մայիսի 9-ի որոշում, DR 38, էջ 222) գործով Հանձնաժողովը վերահաստատել է իր դիրքորոշումը եւ ավելացրել, որ ո՛չ զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվող դիմումատուին պատժի ենթարկելը, եւ ո՛չ էլ այն փաստը, որ այդ պատժի կատարումը չի կասեցվել, չեն կարող հանգեցնել 9-րդ հոդվածի խախտման:

96. Մի շարք գործերում նույնպես Հանձնաժողովը գտել է, որ Կոնվենցիան որպես այդպիսին չի երաշխավորում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը (տես Ն.-ն ընդդեմ Շվեդիայի [*N. v. Sweden*], թիվ 10410/83, Հանձնաժողովի՝ 1984 թվականի հոկտեմբերի 11-ի որոշում, DR 40, էջ 203. տես նաեւ, *mutatis mutandis* (*համապատասխան փոփոխություններով*), *Օթիոն ընդդեմ Ֆինլանդիայի* [*Autio v. Finland*], թիվ 17086/90, Հանձնաժողովի՝ 1991 թվականի դեկտեմբերի 6-ի որոշում, DR 72, էջ 246. եւ *Փիթրսի* եւ *Հոդենսի* գործերը՝ երկուսն էլ վերելում հիշատակված): Սույն գործերում, այնուամենայնիվ, Հանձնաժողովը պատրաստ էր ընդունել, որ, չնայած վերոհիշյալ սկզբունքներին, փաստերը կարող են ընդգրկվել 9-րդ հոդվածի շրջանակներում, իսկ դիմումատուների՝ խտրականության վերաբերյալ պնդումները պետք է հետեւաբար քննվեն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ներքո:

97. Կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար դատապարտման հարցը երկու գործերով ներկայացվել է Դատարան: Այնուամենայնիվ, նշված երկու գործով էլ Դատարանն անհրաժեշտ չի համարել քննել 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը եւ որոշել է հարցին լուծում տալ Կոնվենցիայի այլ դրույթների, մասնավորապես 14-րդ եւ 3-րդ հոդվածների հիման վրա (տես *Թլիմենսի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 43 եւ 53, եւ *Ուլկեի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 53-54 եւ 63-64):

բ) Արդյո՞ք անհրաժեշտ է փոփոխել նախադեպային իրավունքը

98. Թեև իրավական որոշակիության, կանխատեսելիության եւ օրենքի առջեւ հավասարության սկզբունքներից ելնելով՝ Դատարանը չպետք է առանց հիմնավոր պատճառի շեղում կատարի նախկին գործերով արտահայտած՝ նախադեպային իրավունք դարձած որոշումներից, սակայն Դատարանի կողմից դիմամիկ եւ զարգացող մոտեցումներ չմշակելը նույնպես կառաջացնի խոչընդոտներ բարեփոխումների համար (տես *Վիլհո Էսկելինենը եւ այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ] [*Vilho Eskelinen and Others v. Finland* [GC]], թիվ 63235/00, § 56, ՄԻԵԴ 2007-II, եւ *Միկալեֆն ընդդեմ Մալթայի* [ՄՊ] [*Micallef v. Malta* [GC]], թիվ 17056/06, § 81, ՄԻԵԴ 2009): Ծայրահեղ կարելու է, որ Կոնվենցիան մեկնաբանվի եւ կիրառվի այնպես, որ դրանով սահմանված իրավունքները լինեն պրակտիկ եւ արդյունավետ, այլ ոչ թե տեսական եւ մտացածին (տես *Սթեֆրդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Stafford v. the United Kingdom* [GC]], թիվ 46295/99, § 68, ՄԻԵԴ 2002-IV, եւ *Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Christine Goodwin v. the United Kingdom* [GC]], թիվ 28957/95, § 74, ՄԻԵԴ 2002-VI):

99. Դատարանը նշում է, որ մինչ սույն գործն այն երբեւէ չի քննել կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը, ի տարբերություն Հանձնաժողովի, որը մերժել է կիրառել այդ հոդվածը նման անձանց գործերով: Հանձնաժողովն այդպիսով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը կապել է 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ՝ գտնելով, որ դրանով կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչման որոշումը թողնվել է Պայմանավորվող կողմերի հայեցողությանը: Հետեւաբար, կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձինք դուրս էին 9-րդ հոդվածի պաշտպանության սահմաններից, որը չի կարող մեկնաբանվել որպես բանակում ծառայելուց հրաժարվելու դեպքում քրեական հետապնդումից խուսափելու երաշխիք տրամադրող նորմ:

100. Դատարանը, այնուամենայնիվ, հակված չէ համարելու, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի այդպիսի մեկնաբանությունն արտացոլում է այդ դրույթի իրական նպատակը եւ իմաստը: Այն նշում է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ»

ենթակետը 4-րդ հոդվածի 2-րդ կետով արգելված «հարկադիր եւ պարտադիր աշխատանք» հասկացության շրջանակներից բացառում է «զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը»։ Դատարանը, այնուհետեւ, այս կապակցությամբ նշում է 4-րդ հոդվածի վերաբերյալ *Travaux préparatoires*-ը, որի 23-րդ պարբերությամբ սահմանվում է. «[«բ»] ենթակետում, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ դրույթը նպատակ ունի մատնանշելու, որ օրենքով նրանցից պահանջվող ցանկացած ազգային ծառայություն չի ընդգրկվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք հասկացության մեջ։ Քանի որ շատ երկրներ դեռեւս չէին ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, «այն երկրները, որոնք ճանաչել են այդ իրավունքը» արտահայտությունը նույնպես ներառվել էր»։ Դատարանի կարծիքով *Travaux préparatoires*-ով հաստատվում է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի միակ նպատակն է տալ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացության լրացուցիչ պարզաբանում։ Այն ինքնին չի ճանաչում եւ ոչ էլ բացառում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, եւ հետեւաբար այն չպետք է ունենա 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող ազդեցություն։

101. Միեւնույն ժամանակ Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից կիրառված՝ 9-րդ հոդվածի սահմանափակող մեկնաբանումը պայմանավորված է եղել տվյալ ժամանակահատվածում գերակայող մոտեցումներով։ Այն, այնուամենայնիվ, հաշվի է առնում, որ տարիներ են անցել այն պահից, երբ Հանձնաժողովը *Գրանդռաթի* եւ *Գ.Զ.-ն ընդդեմ Ավստրիայի (երկուսն էլ վերելում հիշատակված)* գործերով առաջին անգամ ներկայացրել է իր պատճառաբանությունները՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը բացառելով 9-րդ հոդվածի

շրջանակներից: Թեև հետագայում այլ գործերով կայացրած որոշումներում Հանձնաժողովը վերահաստատել է այդ պատճառաբանությունը, սակայն այդ առնչությամբ վերջին որոշումն ընդունվել է 1995 թվականին: Այդ ընթացքում տեղի են ունեցել կարևոր զարգացումներ ինչպես միջազգային, այնպես էլ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ներպետական իրավական համակարգերում:

102. Դատարանն այս կապակցությամբ կրկին նշում է, որ Կոնվենցիան «կենդանի փաստաթուղթ» է, որը պետք է մեկնաբանվի ներկայիս հանգամանքների լույսի ներքո եւ ներկայումս ժողովրդավարական պետություններում գերակայող գաղափարների հիման վրա (տես, ի թիվս այլ վճիռների, *Տիրերն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Tyrer v. the United Kingdom*], 1978 թվականի ապրիլի 25 , § 31, շարք Ա թիվ 26; *Քրեսսն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Kress v. France* [GC]], թիվ 39594/98, § 70, ՄԻԵԴ 2001-VI; եւ *Քրիսթին Գուդվինի* գործը՝ վերելում հիշատակված, § 75): Քանի որ Դատարանը մարդու իրավունքների պաշտպանության առաջնային եւ կարևոր համակարգ է, այն պետք է հաշվի առնի Պայմանավորվող պետությունների փոփոխվող հանգամանքները եւ չափանիշների սահմանման համար արձագանքի, օրինակ, ցանկացած ընդհանուր զարգացման (տես *Սթեֆրդի* գործը՝ վերելում հիշատակված, § 68, եւ *Սքոփոլան ընդդեմ Իտալիայի (թիվ 2)* [ՄՊ] [*Scoppola v. Italy (no. 2)* [GC]], թիվ 10249/03, § 104, 2009 թվականի սեպտեմբերի 17): Ավելին, Կոնվենցիայի բովանդակության մեջ ներառված եզրույթներն ու հասկացությունները սահմանելիս Դատարանը կարող է եւ պետք է Կոնվենցիայից բացի հաշվի առնի նաեւ միջազգային իրավունքի տարրերը եւ իրավասու մարմինների կողմից դրանց մեկնաբանությունները: Հատուկ գործերում Կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս Դատարանի համար դիտարկման առարկա կարող են հանդիսանալ նաեւ մասնագիտական միջազգային փաստաթղթերից բխող ընդհանուր զարգացումները (տես *Դեմիրը եւ Բայքարան ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Demir and Baykara v. Turkey* [GC]], թիվ 34503/97, § 85, ՄԻԵԴ 2008):

103. Դատարանը նշում է, որ 1980-ականների վերջին եւ 1990-ականներին Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում եւ ավելի ուշ անդամակցած

պետություններում նկատվել է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչման ակնհայտ միտում (տես վերելում՝ 47-րդ պարբերությունը): Նշված պետություններից 19-ը, որոնք դեռ չէին ճանաչել այդ իրավունքը, ամրագրեցին այն իրենց ազգային իրավական համակարգերում այն ժամանակ, երբ Հանձնաժողովը կայացրեց այդ խնդրի վերաբերյալ իր վերջին որոշումը: Այսպես, այն ժամանակ, երբ տեղի է ունեցել դիմումատուի՝ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքին ենթադրյալ միջամտությունը, մասնավորապես, 2002-ից 2003 թվականներին, Հայաստանից բացի չորս այլ անդամ պետություններ դեռ չէին նախատեսել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք ունեցող անձի կարգավիճակ պահանջելու հնարավորությունը. չնայած նշված պետություններից երեքն արդեն իսկ ամրագրել էին այդ իրավունքն իրենց սահմանադրությունների մեջ, սակայն դեռ չէին ընդունել կիրարկող օրենքներ (տես վերելում՝ 48-րդ պարբերությունը): Այսպիսով, տվյալ ժամանակահատվածում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև արդեն իսկ կար ընդհանուր համաձայնություն, որոնց գերակշռող մեծամասնությունն արդեն ճանաչել էր կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքն իրենց օրենսդրության եւ պրակտիկ կիրառման մեջ:

104. Ավելին, Դատարանը նշում է, որ սույն գործի հանգամանքներից հետո երկու այլ անդամ պետություններ ընդունել են օրենքներ, որոնք ամբողջովին կարգավորում են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ այսպիսով թողնելով Ադրբեջանին ու Թուրքիային որպես միակ անդամ պետություններ, որոնք դեռ չեն ճանաչել այդ իրավունքը: Այնուհետեւ, Դատարանը նշում է, որ Հայաստանը նույնպես ճանաչել է այդ իրավունքը դիմումատուին ազատ արձակելուց եւ սույն գանգատը ներկայացվելուց հետո:

105. Դատարանը ցանկանում է նաեւ անդրադառնալ տարբեր միջազգային ֆորաներում այդ իրավունքի ճանաչման վերաբերյալ ոչ պակաս կարեւոր զարգացումներին: Ամենահատկանշականը ՄԱԿ-ի ՄԻԿ-ի կողմից ՔՔԻՄԴ-ի

դրույթների (8-րդ եւ 18-րդ հոդվածներ) մեկնաբանությունն է, որոնք նման են Կոնվենցիայի դրույթներին (4-րդ եւ 9-րդ հոդվածներ): Ի սկզբանե, ՄԱԿ-ի ՄԻԿ-ի մոտեցումը համընկնում էր Եվրոպական հանձնաժողովի մոտեցմանը, համաձայն որի կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը դուրս էր մնում ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածի շրջանակից: Այնուամենայնիվ, 1993 թվականին իր թիվ 22 ընդհանուր մեկնաբանության մեջ այն փոփոխել է իր նախնական մոտեցումը եւ գտել, որ վիճարկվող իրավունքը կարող է ծագել ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածից այնքանով, որ մահացու ուժի օգտագործման պարտականությունը կարող է լուրջ հակասություն առաջացնել խղճի ազատության եւ կրոնի կամ համոզմունքների արտահայտման իրավունքի հետ: 2006 թվականին ՄԱԿ-ի ՄԻԿ-ն ակնհայտորեն հրաժարվել է կիրառել ՔՔԻՄԴ-ի 8-րդ հոդվածը Հարավային Կորեայի դեմ բերված՝ այդ իրավունքին վերաբերող երկու գործերի նկատմամբ եւ նրանց ներկայացրած բողոքները քննել է բացառապես ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածի ներքո՝ գտնելով, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում՝ զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքների հիման վրա հրաժարվելու համար դիմումատուներին դատապարտելու հետեւանքով (տես վերելում՝ 59-64-րդ պարբերությունները):

106. Եվրոպայի պարագայում հարկ է ուշադրության արժանացնել 2000 թվականին Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի հրապարակմանը, որն ուժի մեջ է մտել 2009 թվականին: Թեեւ Խարտիայի 10-րդ հոդվածը գրեթե տառացիորեն վերարտադրում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետը, դրա երկրորդ պարբերությունը հստակորեն սահմանում է հետեւյալը՝ «Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ճանաչվում է՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ազգային օրենսդրությանը համապատասխան» (տես վերելում՝ 57-րդ պարբերությունը): Նման հստակ լրացումն անկասկած ունի միտումներ (տես, *mutatis mutandis*, *Քրիսթին Գուդվինի* գործը՝ վերելում հիշատակված, § 100, եւ *Սքոփիոլայի (թիվ 2)* գործը՝ վերելում հիշատակված, § 105) եւ արտացոլում է Եվրոպական միության անդամ պետությունների կողմից այդ իրավունքի

միասնական ճանաչումը, ինչպես նաև արդի եվրոպական հասարակության մեջ այդ իրավունքին տրվող կշիռը:

107. Եվրոպայի խորհրդի շրջանակներում Խորհրդարանական վեհաժողովը եւ Նախարարների կոմիտեն մի շարք գործերով նույնպես կոչ են արել այն անդամ պետություններին, որոնք դեռ չեն արել դա, ճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքը (տես վերելում՝ 51-55-րդ պարբերությունները): Ավելին, այդ իրավունքի ճանաչումը դարձել է նոր անդամ պետությունների անդամակցության համար պարտադիր նախապայման (տես, օրինակ, վերելում՝ 50-րդ պարբերությունը): 2001 թվականին Խորհրդարանական վեհաժողովը, անդրադառնալով նախկինում իր կողմից արված կոչերին, հատկապես նշել է, որ այդ իրավունքը Կոնվենցիայով նախատեսված՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի հիմնարար տարրն է (տես վերելում՝ 52-րդ պարբերությունը): 2010 թվականին Նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով ՄԱԿ-ի ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի զարգացումները, ինչպես նաև Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի դրույթները, նույնպես հաստատել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված՝ խղճի եւ կրոնի ազատության հասկացության նման մեկնաբանությունը եւ առաջարկել է, որ անդամ պետությունները գորակոչիկների համար ապահովեն կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք ունեցող անձի կարգավիճակ ստանալու իրավունքը (տես վերելում՝ 55-րդ պարբերությունը):

108. Դատարանը, հետևաբար, եզրահանգում է, որ *Գրանդուաթի* (վերելում հիշատակված) գործով Հանձնաժողովի որոշումից եւ դրա հետագա որոշումներից ի վեր Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների գերակշռող մասի ներպետական օրենսդրությունները համապատասխան միջազգային փաստաթղթերի հետ մեկտեղ հանգեցրել են այն արդյունքի, որ ներկա պահին Եվրոպայում եւ դրա սահմաններից դուրս տվյալ խնդրի վերաբերյալ գոյություն ունի գրեթե մեկ ընդհանրական մոտեցում: Այս զարգացումների լույսի ներքո չի կարելի պնդել, որ 2002-ից 2003 թվականներին տեղի ունեցած

իրադարձությունների հետ կապված 9-րդ հոդվածի մեկնաբանության փոփոխությունն անկանխատեսելի էր: Ավելին, Հայաստանը նույնպես հանդիսանում էր ՔՔԻՄԴ-ի կողմ եւ պարտավորվել էր Եվրոպայի խորհրդին անդամակցելուց հետո ընդունել օրենք, որով կճանաչեր այդ իրավունքը:

109. Հաշվի առնելով վերոգրյալը եւ «կենդանի փաստաթուղթ» մոտեցմանը համապատասխան՝ Դատարանը, հետեւաբար, այն կարծիքին է, որ հնարավոր չէ հաստատել Հանձնաժողովի կողմից սահմանված նախադեպային իրավունքը, եւ 9-րդ հոդվածն այսուհետ չպետք է մեկնաբանվի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ համակցությամբ: Հետեւաբար, դիմումատուի բողոքը պետք է քննարկել բացառապես 9-րդ հոդվածի ներքո:

110. Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ 9-րդ հոդվածը մանրամասն չի անդրադառնում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքին: Սակայն այն հաշվի է առնում, որ զինվորական ծառայությունից հրաժարվելն այն դեպքում, երբ դա պայմանավորված է եղել բանակում ծառայելու պարտականության ու անձի խղճի կամ խորը եւ իրական կրոնական կամ այլ համոզմունքների միջեւ լուրջ եւ ծանրակշիռ հակասությամբ, հանգեցնում է համոզմունքի կամ հավատքի բավարար հիմնավորվածության, լրջության, հետեւողականության եւ կարեւորության՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ներգրավման համար (տես, *mutatis mutandis*, *Քեմփբելն ու Բոսանսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Campbell and Cosans v. the United Kingdom*], 1982 թվականի փետրվարի 25, § 36, շարք Ա թիվ 48, եւ, ի հակադրություն՝ *Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Pretty v. the United Kingdom*], թիվ 2346/02, § 82, ՄԻԵԴ 2002-III): Այն հարցը, թե արդյոք այդ դրույթը տարածվում է զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի վրա եւ ինչ ծավալով է տարածվում, պետք է քննարկվի յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

111. Տվյալ գործով դիմումատուն «Եհովայի վկաներ» կազմակերպության անդամ է, կրոնական մի խումբ, որի համոզմունքները դեմ են անգամ առանց զենքի

զինվորական ծառայությանը: Դատարանը, հետևաբար, պատճառ չունի կասկածելու, որ դիմումատուի կողմից զինվորական ծառայությունից հրաժարվելը պայմանավորված է եղել իր կրոնական համոզմունքներով, որոնք ի սկզբանե եղել են, եւ լուրջ ու աներկբա հակասության մեջ են եղել զինվորական ծառայություն իրականացնելու իր պարտականության հետ: Այս իմաստով եւ ի հակասություն Կառավարության կողմից ներկայացված առարկության (տես վերելում՝ 81-րդ պարբերությունը), դիմումատուի իրավիճակը պետք է տարբերակել մեկ այլ իրավիճակից, որը վերաբերում է մի պարտականության, որի կատարումն առնչություն չունի կոնկրետ համոզմունքների հետ, ինչպիսին է, օրինակ, հարկ վճարելու ընդհանուր պարտականությունը (տես, *Յ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*C. v. the United Kingdom*], թիվ 10358/83, Հանձնաժողովի՝ 1983 թվականի դեկտեմբերի 15-ի որոշում, DR 37, էջ 142): Հետևաբար, 9-րդ հոդվածը կիրառելի է դիմումատուի գործի նկատմամբ:

2. 9-րդ հոդվածին համապատասխանությունը

ա) Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն

112. Դատարանը գտնում է, որ գորակոչին չներկայանալով դիմումատուն արտահայտել է իր կրոնական համոզմունքները: Նրա դատապարտումը գորակոչից խուսափելու համար, հետեւաբար, 9-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ կրոնի արտահայտման ազատության իրավունքին միջամտություն է: Նման միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին, քանի դեռ այն «նախատեսված չի եղել օրենքով», չի հետապնդել մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ, ինչպես նախատեսված է հոդվածի 2-րդ կետով, եւ «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» (տես, ի թիվս այլ վճիռների, *Բուսկարինին եւ այլք ընդդեմ Սան Մարինոյի* [ՄՊ] [*Buscarini and Others v. San Marino* [GC]], թիվ 24645/94, § 34, ՄԻԵԴ 1999-I):

բ) Արդյո՞ք միջամտությունն արդարացված էր

i) Նախատեսված է օրենքով

113. Դատարանը կրկին ընդգծում է իր կողմից հաստատված նախադեպային իրավունքը, համաձայն որի «նախատեսված է օրենքով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է, որ կիրառված միջոցը հիմնված լինի ներպետական օրենքի վրա: Այն նաեւ անդրադառնում է խնդրո առարկա օրենքի որակին՝ պահանջելով, որ այն լինի մատչելի այն անձանց համար, ում դա վերաբերում է, եւ ձեւակերպված լինի բավարար հստակորեն, որպեսզի անհրաժեշտության դեպքում, համապատասխան խորհրդատվությամբ, կոնկրետ հանգամանքների դեպքում հնարավորինս կանխատեսի տվյալ գործողության հետեւանքները եւ կարգավորի նրանց վարքագիծը (տես, ի թիվս այլ վճիռների, *Գորժելիկը եւ այլք ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Gorzelik and Others v. Poland* [GC]], թիվ 44158/98, § 64, ՄԻԵԴ 2004-I):

114. Դատարանը դիտարկում է, որ դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել այն ժամանակ գործող Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի վրա, որը սահմանում էր պատիժ՝ զորակոչից խուսափելու համար: Այնուհետև, այն դիտարկում է, որ դիմումատուի դատապարտման ժամանակ այլընտրանքային ծառայության մասին օրենք չի եղել, եւ ՀՀ Սահմանադրությամբ եւ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով պահանջվում էր, որ բոլոր 18-ից 27 տարեկան արական սեռի ՀՀ քաղաքացիները, ովքեր ճանաչվել են ֆիզիկապես պիտանի, իրականացնեն զինվորական ծառայություն: Դատարանը հաշվի է առնում, որ սույն դրույթները, որոնք անկասկած եղել են մատչելի, կազմված են եղել բավականին հստակ եզրույթներով:

115. Ճիշտ է նաեւ, որ, ըստ էության, գոյություն է ունեցել անհամապատասխանություն նշված ներպետական դրույթների եւ Հայաստանի իշխանությունների կողմից Եվրոպայի խորհրդին անդամակցելիս ստանձնած հանձնառությունների միջեւ, մասնավորապես, ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք անդամակցելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, եւ միաժամանակ ներում շնորհել ազատազրկման դատապարտված՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող բոլոր անձանց՝ թույլատրելով նրանց օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոխարենն իրականացնել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն (տես վերելում՝ 50-րդ պարբերությունը): Դատարանը, այնուամենայնիվ, չի ցանկանում լուծել ներպետական օրենսդրության եւ Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառության միջեւ գոյություն ունեցող այդ ակնհայտ հակասության հարցը: Սույն համատեքստում Դատարանը նաեւ անհրաժեշտ չի համարում քննարկել իշխանությունների կողմից ՔՔԻՄԴ-ի դրույթները չպահպանելու հարցը (տես վերելում՝ 59-րդ պարբերությունը):

116. Հետեւաբար, ելնելով սույն գործի նպատակներից եւ հաշվի առնելով միջամտության անհրաժեշտության վերաբերյալ իր եզրահանգումները (տես ներքելում՝ 124-128-րդ պարբերությունները), Դատարանը նպատակահարմար է համարում չքննարկել միջամտության՝ օրենքով նախատեսված լինելու հարցը:

ii) Իրավաչափ նպատակ

117. Կառավարությունը վկայակոչել է հասարակական կարգի եւ այլոց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը: Դատարանը, այնուամենայնիվ, սույն գործի հանգամանքներում համոզիչ չի համարում Կառավարության անդրադարձը նշված նպատակներին՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուի դատապարտման ժամանակ Հայաստանի իշխանություններն արդեն իսկ պարտավորված են եղել ընդունել այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենք եւ իհարկե զերծ մնալ կրոնական համոզմունքներ կրող անձանց նոր դատապարտումներից (տես ներքեւում՝ 127-րդ պարբերությունը): Այն, այնուամենայնիվ, անհրաժեշտ չի համարում վերջնականորեն հաստատել, թե արդյոք Կառավարության կողմից ներկայացված նպատակները եղել են իրավաչափ՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, քանի որ, եթե անգամ ենթադրվի, որ դրանք ամեն դեպքում եղել են իրավաչափ, միեւնույնն է, միջամտությունը չի համապատասխանել այդ դրույթներին՝ ստորեւ ներկայացվող պատճառաբանությամբ:

iii) Անհրաժեշտ՝ ժողովրդավարական հասարակությունում

118. Դատարանը կրկին նշում է, որ ինչպես նախատեսված է 9-րդ հոդվածում, մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը Կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» հիմնասյուններից մեկն է: Այս ազատությունն իր կրոնական ուղղվածությամբ այն կարեւորագույն բաղադրիչներից մեկն է, որը լրացնում է հավատացյալների ինքնությունը եւ կյանքի մասին նրանց պատկերացումը, բացի դրանից, այն նաեւ անգնահատելի միջոց է աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների եւ դեռեւս չկոդմնորոշվածների համար: Ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասը կազմող բազմակարծությունը, որը ձեռք է բերվել դարերի ընթացքում, պայմանավորված է դրանով: Այս ազատությունն անձին օժտում է, *inter alia*, կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու, կրոնին պատկանելու կամ չպատկանելու իրավունք (տես *Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի* [Kokkinakis v.

Greece], 1993 թվականի մայիսի 25, § 31, շարք Ա թիվ 260-Ա. *Բուսկարինին եւ այլք*՝ վերելում հիշատակված, § 34. եւ *Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Leyla Şahin v. Turkey* [GC]], թիվ 44774/98, § 104, ՄԻԵԴ 2005-XI):

119. Թեեւ կրոնական ազատությունը հիմնականում անհատի գիտակցության հարցն է, այն նաեւ ներառում է, *inter alia*, անհատականորեն ու գաղտնի կամ խմբով միեւնույն հավատքը կրող այլ անձանց հետ ու հրապարակայնորեն իրենց կրոնի արտահայտման ազատությունը: 9-րդ հոդվածը թվարկում է անձի կրոնի կամ հավատքի արտահայտման մի քանի տեսակ՝ պաշտամունք, ուսուցում, պրակտիկ կիրառում եւ դիտարկում (տես *Հասանը եւ Չաուշն ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ] [*Hasan and Chaush v. Bulgaria* [GC]], թիվ 30985/96, § 60, ՄԻԵԴ 2000-XI, եւ *Բեսարաբիայի մետրոպոլիտական եկեղեցին եւ այլք ընդդեմ Մոլդովայի* [*Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova*], թիվ 45701/99, § 114, ՄԻԵԴ 2001-XII):

120. Դատարանը հաճախ է ընդգծել պետության դերը՝ որպես տարբեր կրոնների, հավատքների եւ համոզմունքների իրականացման անկողմնակալ եւ անաչառ կազմակերպիչ, եւ նշել է, որ ժողովրդավարական հասարակությունում այդ դերը պետք է հանգեցնի հասարակական կարգի ապահովման, կրոնական ներդաշնակության եւ հանդուրժողականության: Պետության՝ անաչառության եւ անկողմնակալության պարտականությունն անհամատեղելի է պետության կողմից ցանկացած միտման հետ՝ գնահատելու կրոնական համոզմունքների իրավաչափությունը կամ դրանք արտահայտելու եղանակները (տես *Մանուսակիսը եւ այլք ընդդեմ Հունաստանի* [*Manoussakis and Others v. Greece*], 1996 թվականի սեպտեմբերի 26, § 47, Ձեկույցներ 1996-IV, եւ *Հասանի եւ Չաուշի* գործը՝ վերելում հիշատակված, § 78):

121. Իր հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ Դատարանը Կոնվենցիայի կողմ պետություններին տալիս է որոշակի հայեցողության շրջանակ՝ միջամտության անհրաժեշտությունը եւ դրա սահմանները որոշելու համար: Այս

հայեցողության շրջանակը համահունչ է եվրոպական վերահսկողության հետ, որն ընդգրկում է եւ՝ օրենքը, եւ՝ այն կիրառող որոշումները: Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք ներպետական մակարդակում կիրառված միջոցները սկզբունքորեն արդարացված եւ համաչափ են եղել (տես *Մանուսակիսը եւ այլք* գործը՝ վերելում հիշատակված, § 44; *Բեսարաբիայի մետրոպոլիտական եկեղեցին եւ այլք* գործը՝ վերելում հիշատակված, § 119; եւ *Լեյլա Շահինի* գործը՝ վերելում հիշատակված, § 110):

122. Սույն գործով հայեցողության շրջանակի սահմանները որոշելու համար Դատարանը պետք է հաշվի առնի, թե ինչ է դրված նժարին, մասնավորապես՝ իրական կրոնական բազմակարծությունը պահպանելու անհրաժեշտությունը, ինչը ժողովրդավարական հասարակության գոյության կենսական պայման է (տես *Մանուսակիսը եւ այլք* գործը՝ վերելում հիշատակված, § 44, եւ *Բեսարաբիայի մետրոպոլիտական եկեղեցին եւ այլք* գործը՝ վերելում հիշատակված, § 119): Դատարանը ուշադրության կարժանացնի նաեւ Կոնվենցիայի կողմ պետությունների համընդհանուր մոտեցումը եւ պրակտիկայից բխող ընդհանուր արժեքները (տես, *mutatis mutandis*, *X-ը, Y-ը եւ Z-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*X, Y and Z v. the United Kingdom*], 1997 թվականի ապրիլի 22, § 44, Ձեկույցներ 1997-II, եւ *Դիքսոն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Dickson v. the United Kingdom* [GC]], թիվ 44362/04, § 78, ՄԻԵԴ 2007-V):

123. Դատարանն արդեն վերելում նշել է, որ Եվրոպայի խորհրդի գրեթե բոլոր անդամ պետությունները, որոնք ունեցել են կամ մինչ այժմ ունեն պարտադիր զինվորական ծառայություն, ընդունել են այլընտրանքային ծառայության տարբերակներ՝ անհատի համոզմունքների եւ զինվորական պարտականության միջեւ հնարավոր հակասությունը հարթելու համար: Հետեւաբար, այն պետությունը, որը չի արել դա, ունի հայեցողության միայն նեղ շրջանակ եւ պետք է ներկայացնի համոզիչ եւ ուժեղ փաստարկներ՝ ցանկացած միջամտություն հիմնավորելու համար: Մասնավորապես, այն պետք է ցույց տա, որ միջամտությունը «ճնշող սոցիալական կարիքի» արդյունք է (տես *Մանուսակիսը եւ այլք*՝ վերելում հիշատակված, § 44, *Սերիֆն ընդդեմ Հունաստանի* [*Serif v.*

Greece], թիվ 38178/97, § 49, ՄԻԵԴ 1999-IX, *Բեսարաբիայի մետրոպոլիտական եկեղեցին եւ այլք՝* վերելում հիշատակված, § 119, *Ազգան ընդդեմ Հունաստանի (թիվ 2) [Agga v. Greece (no. 2)]*, թիվ 50776/99 եւ 52912/99, § 56, 2002 թվականի հոկտեմբերի 17, եւ *Փրկության բանակի՝ Մոսկվայի մասնաճյուղն ընդդեմ Ռուսաստանի [Moscow Branch of the Salvation Army v. Russia]*, թիվ 72881/01, § 62, ՄԻԵԴ 2006-XI):

124. Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ սույն գործում դիմումատուն, հանդիսանալով «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ, փորձել է ազատվել զինվորական ծառայությունից ոչ թե անձնական շահերից կամ հարմարությունից, այլ իր իրական կրոնական համոզմունքներից ելնելով: Քանի որ Հայաստանում չկար այլընտրանքային քաղաքացիական ծառայություն տվյալ պահին, դիմումատուն չունեւր այլընտրանք, քան հրաժարվել զորակոչից, քանի որ պետք է հավատարիմ մնար իր հավատքին եւ համոզմունքներին եւ իր այդ արարքով ենթարկվել քրեական պատասխանատվության: Այսպես, տվյալ ժամանակ գործող համակարգը քաղաքացիների վրա դնում էր մի պարտականություն, որը լուրջ հետեւանքներ կարող էր առաջացնել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար՝ չնախատեսելով կրոնական հիմքով որեւէ բացառություն եւ սահմանելով պատիժ զինվորական ծառայությունից խուսափողների համար: Դատարանի կարծիքով, նման համակարգով չի ապահովվում արդարացի հավասարակշռություն հասարակության ընդհանուր եւ դիմումատուի շահերի միջեւ: Հետեւաբար, այն գտնում է, որ դիմումատուի նկատմամբ պատժի կիրառումը այն դեպքում, երբ իր խղճի եւ համոզմունքների պահանջների կապակցությամբ որեւէ զիջում նախատեսված չէր, չի կարող համարվել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց: Մինչդեռ մրցակցող շահերի համար պետք է նախատեսված լինեին նվազագույն արդյունավետ եւ կիրառելի այլընտրանքներ, ինչպես դա ցույց է տալիս եվրոպական պետությունների մեծամասնության փորձը:

125. Դատարանն ընդունում է, որ զինվորական պարտադիր ծառայություն

նախատեսող ցանկացած համակարգ քաղաքացիների վրա դնում է ծանր բեռ: Այն կարող է արդարացվել միայն հավասար բաշխման դեպքում, եւ եթե այդ պարտականությունից ազատելը կատարվում է համոզիչ եւ հիմնավոր հիմքերով (տես *Օթինյի* գործը՝ վերելում հիշատակված): Դատարանն արդեն գտել է, որ դիմումատուն ներկայացրել է համոզիչ եւ հիմնավոր պատճառաբանություններ՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար (տես վերելում՝ 111-րդ պարբերությունը): Այն նաեւ նշում է, որ դիմումատուն ընդհանուր առմամբ երբեք չի հրաժարվել իր քաղաքացիական պարտականությունները կատարելուց: Հակառակը, նա ակնհայտորեն դիմել է իշխանություններին՝ իրեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն անցնելու հնարավորություն տրամադրելու խնդրանքով: Այսպես, դիմումատուն պատրաստ էր, համոզիչ պատճառներից ելնելով, պարտադիր զինվորական ծառայություն անցնող իր համաքաղաքացիների հետ հավասարապես կիսել սոցիալական բեռը՝ այլընտրանքային ծառայություն կատարելու միջոցով: Նման հնարավորության բացակայության պարագայում դիմումատուն փոխարենը կրել է պատիժ:

126. Դատարանը, այնուհետեւ, կրկին նշել է, որ բազմակարծությունը, հանդուրժողականությունը եւ լայնախոհությունը «ժողովրդավարական հասարակության» չափանիշներն են: Անվիճելի է, որ խմբի շահերը պետք է գերադասվեն անհատական շահերից, այնուամենայնիվ ժողովրդավարություն չի նշանակում, որ մեծամասնության կարծիքը պետք է մշտապես գերակայի. անհրաժեշտ է հասնել հավասարակշռության, որը կապահովի արդարացի եւ համապատասխան վերաբերմունք փոքրամասնությունների նկատմամբ եւ կբացառի գերակայող դիրքի ցանկացած չարաշահում (տես *Լեյլա Շահինի* գործը՝ վերելում հիշատակված, § 108): Այսպես, դիմումատուի նման փոքրամասնություն կազմող կրոնական խմբերի նկատմամբ պետության կողմից հարգանքի դրսևորումը՝ վերջիններիս կողմից իրենց համոզմունքներին համապատասխան ձեռով հասարակությանը ծառայելու հնարավորություն տրամադրելու միջոցով, կստեղծի առավել միասնական եւ կայուն բազմակարծություն, խթան կհանդիսանա կրոնական ներդաշնակության եւ հասարակության շրջանում

հանդուրժողականության համար, որն ավելի գերադասելի է, քան, ինչպես Կառավարությունն է պնդում, անարդար անհավասարություններ ստեղծելը կամ խտրականություն ցուցաբերելը:

127. Դատարանը, ի վերջո, նշում է, որ դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը եւ դատապարտումը տեղի են ունեցել այն ժամանակ, երբ Հայաստանի իշխանություններն արդեն իսկ պաշտոնապես պարտավորություն էին ստանձնել Եվրոպայի խորհրդին անդամակցելուց հետո որոշակի ժամկետում ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք (տես վերելում՝ 50-րդ պարբերությունը): Ավելին, չնայած տվյալ ժամանակահատվածում կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց չդատապարտելու վերաբերյալ ուղղակի մատնանշում չկար Խորհրդարանական վեհաժողովի թիվ 221 կարծիքում, կարելի է ասել, որ դա բխում էր հետեւյալ արտահայտությունից. «... միաժամանակ ներում շնորհել բոլոր կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից հրաժարվող այն անձանց, ովքեր ազատագրվել են ... փոխարենը թույլատրելով նրանց ... , օրենքն ուժի մտնելուց հետո ... իրականացնել ... այլընտրանքային քաղաքացիական ծառայություն»: Հայաստանի իշխանությունների կողմից նման պարտավորությունների ստանձնումը նշանակում է, որ խղճի ազատությունը կարող է արտահայտվել զինվորական ծառայությունից հրաժարվելու միջոցով, եւ խնդրի հանգուցալուծումը պետք է լինի այլընտրանքային միջոցների ընդունումը, այլ ոչ թե այդ անձանց նկատմամբ պատիժների կիրառումը: Հետեւաբար, համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար դիմումատուին դատապարտելն ուղղակի հակասում էր տվյալ ժամանակահատվածում ի կատարումն ստանձնած միջազգային հանձնառությունների, Հայաստանում իրականացվող բարեփոխումների եւ օրենսդրական փոփոխությունների պաշտոնական քաղաքականությանը, եւ նման հանգամանքներում չի կարելի ասել, որ այն թելադրված էր ճնշող սոցիալական կարիքով: Այս իրավիճակն ավելին քան այդպիսին է՝ հաշվի առնելով, որ այլընտրանքային ծառայության մասին օրենքն ընդունվել է ավելի շուտ, քան դիմումատուի վերջնական դատապարտումից հետո

մեկ տարվա ընթացքում: Այն փաստը, որ դիմումատուն հետագայում պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել, չի փոխում իրավիճակը: Նոր օրենքի ընդունումը նույնպես չի ունեցել որևէ ազդեցություն դիմումատուի գործի վրա:

128. Վերը նշված բոլոր պատճառաբանություններից ելնելով՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի դատապարտումը միջամտություն է, որն անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով: Հետեւաբար, տեղի է ունեցել նշված դրույթի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

129. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

130. Դիմումատուն պահանջել է 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

131. Կառավարությունը նշել է, որ ոչ նյութական վնասի դիմաց պահանջվող գումարը չափազանցված է: Ավելին, դիմումատուն չի ապացուցել, որ փաստացի կրել է ոչ նյութական վնաս: Ամեն դեպքում իրավունքի խախտման ճանաչումը բավարար փոխհատուցում է:

132. Դատարանը համարում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ կրոնական համոզմունքներից ելնելով բանակում ծառայելուց հրաժարվելու համար դատապարտվելու եւ ազատազրկման ենթարկվելու հետեւանքով: Ելնելով արդարացիության սկզբունքից՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 10 000 եվրո՝ որպէս ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

133. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 17 500 եվրո՝ որպէս ծախսերի եւ ծախքերի համար փոխհատուցում, ներառյալ՝ 3 000 եվրո՝ ներպետական վարույթներում կրած դատական ծախսերի դիմաց, 11 500 եվրո՝ Պալատի վարույթում կրած դատական ծախսերի դիմաց, եւ 3 000 եվրո՝ Մեծ Պալատի վարույթում կրած դատական ծախսերի դիմաց, այդ թվում՝ լսումներին ներկա գտնվելու ծախսերը: Դիմումատուն ներկայացրել է երեք (մեկը՝ ներպետական եւ երկուսը՝ օտարերկրյա) իրավաբանների հաշիվ-ապրանքագրեր, որոնցում նշված էին մինչ գործով վերջնական որոշման կայացման պահը եւ ներառյալ որոշման կայացումը յուրաքանչյուր փուլի դիմաց վճարման ենթակա միանվագ գումարներ:

134. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն կարող է պահանջել ծախսերի եւ ծախքերի փոխհատուցում միայն 9-րդ հոդվածի ներքո ներկայացրած իր բողոքների առնչությամբ, քանի որ Կոնվենցիայի մյուս հոդվածների ներքո ներկայացված իր բողոքները հայտարարվել էին անընդունելի: Ամեն դեպքում ծախսերի եւ ծախքերի մասով նրա պահանջը պատշաճորեն հիմնավորված չէր համապատասխան փաստաթղթերով, եւ դիմումատուն չէր ներկայացրել որեւէ ապացույց, որ այդ ծախսերը փաստացի կատարվել են: Դիմումատուի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը չեն կարող համարվել վճարումը փաստացի կատարված լինելու վերաբերյալ ապացույց կամ իր եւ իր իրավաբանների միջեւ կնքված համաձայնություն՝ հետագայում այդ գումարները վճարելու վերաբերյալ: Ավելին, անընդունելի է պահանջել ապագայում կատարվելիք ծախսերի փոխհատուցում, ինչպիսիք են, օրինակ, լսումներին ներկա գտնվելու հետ կապված

ծախսերը: Ավելին, իրավաբանների վճարները ողջամիտ չէին, ուռճացված էւ չափազանցված էին, բացի այդ դիմումատուն վարձել էր մեծ քանակությամբ իրավաբաններ, որի հետեւանքով կատարվել էր կրկնակի աշխատանք: Ի վերջո, Կառավարությունը պնդել է, որ երկու օտարերկրյա իրավաբանները Կանադայի ռեզիդենտներ էին եւ, հետեւաբար, չէին համապատասխանում դիմումատուին ներկայացնելու համար պահանջվող չափանիշներին:

135. Դատարանը կրկին նշում է, որ փոխհատուցման ենթակա են միայն ճանաչված խախտումների առնչությամբ ներկայացված դատական ծախսերը (տես *Բեյլերն ընդդեմ Իտալիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Beyeler v. Italy* (just satisfaction) [GC]], թիվ 33202/96, § 27, 2002 թվականի մայիսի 28): Սույն գործում դիմումատուի կողմից Դատարան ներկայացված սկզբնական գանգատը ներառում էր Կոնվենցիայի բազմաթիվ այլ հոդվածների՝ 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 5-րդ կետերի, 6-րդ եւ 14-րդ հոդվածների մասով բողոքներ, որոնք հայտարարվել են անընդունելի: Հետեւաբար, դիմումատուի պահանջը չի կարող բավարարվել ամբողջությամբ, այն պետք է համապատասխանաբար նվազեցվի: Դատարանը, այնուամենայնիվ, համաձայն չէ Կառավարության այն փաստարկին, որ դիմումատուի պահանջը պատշաճորեն չի հիմնավորվել համապատասխան փաստաթղթերով, կամ որ ներկայացված գումարներն ուռճացված են կամ ողջամիտ չեն: Դատարանը չի համաձայնվում նաեւ Կառավարության մեկ այլ փաստարկին, որը վերաբերում է երկու օտարերկրյա իրավաբաններին, քանի որ վերջիններիս թույլատրվել է պաշտպանել դիմումատուի իրավունքները Դատարանում: Առկա տեղեկությունների հիման վրա կատարելով իր հաշվարկները՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 10 000 եվրո՝ որպես ծախսերի եւ ծախքերի դիմաց փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

136. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի

սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. *Վճռում է*, ձայների տասնվեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

2. *Վճռում է*, ձայների տասնվեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 10 000 եվրո (տասը հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 10 000 եվրո (տասը հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

3. *Մեքժում է* միաձայն դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով, կայացվել է 2011 թվականի հուլիսի 7-ին՝ Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների Դատարանի շենքում կայացած դրնբաց լսմանը:

Վինսնթ Բերգեր

Ժան-Փոլ Կոստա

Իրավախորհրդատու

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Գյուլումյանի առանձին կարծիքը:

Ժ.-Փ. Կ.

Վ.Բ.

ԴԱՏԱՎՈՐ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ցավոք, ես չեմ կարող համաձայնել Մեծ Պալատի մեծամասնության հետ, որ սույն գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

1. Սույն գործով դիմումատուն դատապարտվել է իր կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար, քանի որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանում դեռևս չէր ընդունվել այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենք: Դիմումատուն դատապարտվել էր **երկուսուկես տարի** ժամկետով ազատազրկման եւ 2003 թվականի հուլիսի 22-ին **պայմանական վաղաժամկետ ազատ էր արձակվել**, իր պատժից կրելով **տասնուկես ամիս ժամկետով** ազատազրկում: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին եւ ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 1-ին:

2. Արտահայտելով կարծիքս՝ ես չեմ ցանկանում ընդգծել մտքի, խղճի եւ կրոնի ազատությանը, ինչպես նաեւ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նկատմամբ իմ կողմից տրվող կարեւորությունը, սակայն չեմ կարող չանդրադառնալ այն փաստին, որ վերջինս ուղղակիորեն նախատեսված չէ Կոնվենցիայով:

Կոնվենցիան եւ դրան կից արձանագրությունները, որպես այդպիսին, չեն երաշխավորում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու որեւէ իրավունք: Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար զինվորական կամ այն փոխարինող քաղաքացիական ծառայությունից ազատվելու իրավունք Կոնվենցիայի 9-րդ հոդվածով չի սահմանվում: Այն նաեւ չի արգելում պետությանը կիրառել պատժամիջոցներ նման ծառայությունից հրաժարված անձանց նկատմամբ:

Դատարանը մի շարք դեպքերում նշել է, որ 9-րդ հոդվածը չի պաշտպանում ցանկացած գործողություն, որը դրդվել կամ ոգեշնչվել է կրոնից կամ հավատքից (տես, ի թիվս այլ վճիռների, *Կալաչն ընդդեմ Թուրքիայի* [*Kalaç v. Turkey*], 1997 թվականի հուլիսի 1, § 27, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1997-IV, *Արոնսմիթն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Arrowsmith v. the United Kingdom*], թիվ 7050/75, Հանձնաժողովի՝ 1978 թվականի հոկտեմբերի 12-ի զեկույց, Որոշումներ եւ զեկույցներ (DR) 19, էջ 6, *Յ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*C. v. the United Kingdom*], թիվ 10358/83, Հանձնաժողովի՝ 1983 թվականի դեկտեմբերի 15-ի որոշում, DR 37, էջ 142, *Թեփելին եւ այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Tepeli and Others v. Turkey* (dec.)], թիվ 31876/96, 2001 թվականի սեպտեմբերի 11, եւ *Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Leyla Şahin v. Turkey [GC]*], թիվ 44774/98, § 105, ՄԻԵԴ 2005-XI):

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն իր թիվ 1518(2001) եւ 1742(2006) հանձնարարականներում առաջարկել է Նախարարների կոմիտեին **լրացուցիչ արձանագրության միջոցով Կոնվենցիայում ամրագրել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը**, որը մերժվել է Նախարարների կոմիտեի կողմից: Ինչպես Խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպական խորհրդարանը նույնպես գտել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքն անբակտելի է մտքի, խղճի եւ կրոնի ազատության հասկացությունից եւ նույնպես կոչ է արել **ամրագրել** այդ իրավունքը Կոնվենցիայում:

Ես կարծում եմ, որ Դատարանի դերն է պաշտպանել մարդու այն իրավունքները, որոնք արդեն նախատեսված են Կոնվենցիայով, այլ ոչ թե սահմանել նոր իրավունքներ: Որեւէ մեկը կարող է պնդել, որ Կոնվենցիան որպես զարգացող փաստաթուղթ համարելու մոտեցումը Դատարանին թույլ է տալիս ընդլայնել պաշտպանվող իրավունքները: Սակայն դա իմ կարծիքով անթույլատրելի է այն դեպքում, երբ Կոնվենցիան Պայմանավորող կողմերի հայեցողությանն է թողնում առանձին իրավունքների ճանաչումը:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով «կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց իրավունքի ճանաչման ընտրությունը հստակորեն վերապահվել է յուրաքանչյուր Պայմանավորող կողմի» (տես Բայաթյանն ընդդեմ Հայաստանի [*Bayatyan v. Armenia*], թիվ 23459/03, § 63, 2009 թվականի հոկտեմբերի 27): Սույն դրույթը «հարկադիր աշխատանք» հասկացությունից բացառում է «զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ *այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում* զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը»:

3. Ես հիմնովին համաձայն չեմ մեծամասնության եզրակացության հետ, որ 9-րդ հոդվածը չպետք է այլևս դիտարկվի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ համակցված: Դա հակասում է Դատարանի այն անփոփոխ մոտեցմանը, համաձայն որի Կոնվենցիան պետք է նաեւ դիտարկվի իր ամբողջության մեջ եւ մեկնաբանվի այնպես, որ նպաստի տարբեր դրույթների միջեւ ներքին կայունությանը եւ համաձայնեցվածությանը (տես Կլասսը եւ այլք ընդդեմ Գերմանիայի [*Klass and Others v. Germany*], 1978 թվականի սեպտեմբերի 6, § 68, շարք Ա թիվ 28, ինչպես նաեւ *Մաույան ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Maaouia v. France* [GC]], թիվ 39652/98, § 36, ՄԻԵԴ 2000-X, *Կուդլան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Kudła v. Poland* [GC]], թիվ 30210/96, § 152, ՄԻԵԴ 2000-XI, եւ *Սթեքը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) [ՄՊ] [*Stec and Others v. the United Kingdom* (dec.) [GC]], թիվ 65731/01 եւ թիվ 65900/01, § 48, ՄԻԵԴ 2005-X):

4. Միայն վերջերս՝ իր 2010 թվականի ամենավերջին հանձնարարականում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը համարել է 9-րդ հոդվածով նախատեսված՝ խղճի եւ կրոնի ազատության անբաժանելի մաս՝ միջազգային ասպարեզի զարգացումների լույսի ներքո:

2000 թվականի դեկտեմբերին ընդունված՝ Եվրոպական միության հիմնարար

իրավունքների խարտիան, որը ճանաչում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի ներքո, ուժի մեջ է մտել միայն 2009 թվականի դեկտեմբերին:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն մինչեւ 2006 թվականն ուղղակիորեն չի մերժել կիրառել Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 8-րդ հոդվածը՝ Հյուսիսային Կորեայի դեմ բերված երկու գործերով, որոնք վերաբերում էին կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց՝ նրանց բողոքները քննության առնելով միայն ՔՔԻՄԴ-ի 18-րդ հոդվածի ներքո եւ ճանաչելով այդ դրույթի խախտում՝ համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու համար դիմումատուներին դատապարտելու առնչությամբ:

Ես նաեւ ցանկանում եմ ընդգծել, որ երբ դիմումատուն դատապարտված էր կրոնական համոզմունքներից ելնելով զինված ուժերում ծառայությունից հրաժարվելու համար, առկա էր հստակ նախադեպային իրավունք, որի համաձայն Կոնվենցիան եւ դրան կից արձանագրությունները չէին երաշխավորում, որպես այդպիսին, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու որեւէ իրավունք: Ազգային իշխանությունները չեն կարող քննադատվել առկա նախադեպային իրավունքին հետեւելու եւ ավելի ուշ զարգացումներն արտացոլող մոտեցումները չկիրառելու համար:

5. Ինչ վերաբերում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայության ճանաչմանը, որը Հայաստանն ստանձնել է 2000 թվականին միջազգային պարտավորությունների ներքո՝ Եվրոպայի խորհրդին միանալու պահին, ապա իմ կարծիքով դա տվյալ ժամանակահատվածում չի կարող համարվել պարտադիր իրավաբանական ուժ ունեցող: Հայաստանը պարտավորվել էր ճանաչել այդ իրավունքը եւ ներում շնորհել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական

ծառայությունից հրաժարվող բոլոր դատապարտված անձանց **ոչ թե անմիջապես, այլ միանալուց հետո՝ երեք տարվա ընթացքում**: Հայաստանը, ինչպես եւ խոստացել էր, կատարել է իր հանձնառությունները միանալուց հետո՝ երեք տարվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ներում է շնորհվել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող 38 անձի, եւ դիմումատուն պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել: Հետեւաբար պարզ է, որ չկա այս վճիռն ընդունելու անհրաժեշտությունը՝ համոզված լինելու համար, որ Հայաստանը կկատարի այն, ինչ խոստացել էր:

6. Եթե 9-րդ հոդվածը կիրառելի չէ, ապա անհերքելի է, որ այն չէր կարող խախտվել: Այդ իսկ պատճառով ես դեմ եմ քվեարկել խախտումը ճանաչելուն: Շատ կասկածելի է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում ճանաչելը դիմումատուի նկատմամբ անհատական արդարադատության կայացում էր: Հետաքրքրական է այն հանգամանքը, թե արդյոք նա կարող է համարվել տուժող՝ այս Դատարան դիմելու պահին: Ընդունելի է, որ նա զրկվել էր ազատությունից, սակայն նա, որպես այդպիսին, բողոքել է ոչ թե ազատությունից զրկելու առնչությամբ, այլ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայություն անցնելու հնարավորության բացակայության մասին: Այս գանգատը ներկայացնելու պահին դիմումատուն արդեն իսկ պայմանական վաղաժամկետ ազատ էր արձակվել, իսկ վեց ամիս անց ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը:

Մի շարք գործերում (տե՛ս *Սիսոյեւան եւ այլք ընդդեմ Լատվիայի* (գործերի ցուցակից հանված) [ՄՊ] [*Sisojeva and Others v. Latvia* (striking out) [GC]], թիվ 60654/00, ՄԻԵԴ 2007-I, *Շեւանովան ընդդեմ Լատվիայի* (գործերի ցուցակից հանված) [ՄՊ] [*Shevanova v. Latvia* (striking out) [GC]], թիվ 58822/00, 2007 թվականի դեկտեմբերի 7, եւ *EI Majjaoui and Stichting Toubia Moskee-ն ընդդեմ Նիդերլանդների* (գործերի ցուցակից հանված) [ՄՊ] [*EI Majjaoui and Stichting Toubia Moskee v. the Netherlands* (striking out) [GC]], թիվ 25525/03, 2007 թվականի դեկտեմբերի 20) Դատարանը գտել է, որ դիմումատուների բողոքների առիթ հանդիսացող հարցը

կարելի է այսուհետ համարել «լուծված»՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի իմաստով, եւ հանել գանգատներն իր գործերի ցուցակից: Վերոնշյալ գործերում Դատարանը պատճառաբանել է, որ, ի վերջո, «Կոնվենցիան Պայմանավորվող կողմերի համար չի սահմանում իրենց ներքին օրենսդրության շրջանակներում նախատեսել Կոնվենցիայի արդյունավետ իրագործումն ապահովելու որոշակի եղանակ»: Դրան հասնելու ամենապատշաճ եղանակի ընտրությունն սկզբունքորեն ներպետական իշխանությունների հարցն է, որոնք շարունակական կապի մեջ են իրենց երկրների կենսական ուժերի հետ եւ ավելի լավ են տեղակայված՝ իրենց համապատասխան ներպետական իրավական համակարգերի ընձեռած հնարավորությունները եւ ռեսուրսները գնահատելու համար (տես *Մեքենավարների շվեդական միությունն ընդդեմ Շվեդիայի* [*Swedish Engine Drivers' Union v. Sweden*], 1976 թվականի փետրվարի 6, § 50, շարք Ա թիվ 20, *Չափմանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Chapman v. the United Kingdom* [GC]], թիվ 27238/95, § 91, ՄԻԵԴ 2001-I, եւ *Միսոյեւան եւ այլք գործը՝ վերելում հիշատակված*, § 90):

8. Վերջապես, թույլ տվեք չհամաձայնել Կոնվենցիայի 41-րդ հոդվածի ներքո արդարացի փոխհատուցման վերաբերյալ Դատարանի ընդունած վճռի հետ: Ես գտնում եմ, որ ոչ նյութական վնասի եւ ծախսերի ու ծախքերի մասով շնորհված գումարները չափազանց մեծ են:

Նախ, իմ կարծիքով, արդարացի չէ դիմումատուին փոխհատուցում տրամադրելն այն դեպքում, երբ Դատարանը շեղվում է իր գոյություն ունեցող նախադեպային իրավունքից, ինչպես տեղի ունեցավ սույն գործով:

Երկրորդ, չի կարող լինել ոչ մի կասկած, որ արդարացի փոխհատուցում շնորհելու նկատմամբ Դատարանի նախադեպային իրավունքի հետեւողական կիրառումը նույնպես առանձնակի կարեւորություն է ներկայացնում, ինչպես նաեւ փոխհատուցումը պետք է լինի կանխատեսելի Կառավարության համար: Վերջերս Դատարանը քննության էր առել նմանատիպ հարց *Ուլկեն ընդդեմ Թուրքիայի* [*Ulke v. Turkey*] (թիվ 39437/98, 2006 թվականի հունվարի 24) գործով՝ ինը քրեական

հետապնդումներով պատճառված տառապանքի առնչությամբ, որոնք բոլորը հանգեցրել էին ազատագրկման դատապարտման եւ ցանկացած պահի կրկին ձերբակալվելու վտանգի. ոչ նյութական վնասի փոխհատուցման համար սահմանված գումարը նույնն էր, ինչ սույն գործով սահմանված գումարը:

Վերջապես, Դատարանն ունի վաղուց գոյություն ունեցող պրակտիկա՝ նվազեցնելու ծախսերի եւ ծախքերի համար կատարված շնորհումները՝ ճանաչված խախտումների թվին համապատասխան: Սույն գործով, դիմումատուի կողմից ի սկզբանե Դատարան ներկայացված գանգատը ներառում էր բազմաթիվ այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 5-րդ կետերի, 6-րդ եւ 14-րդ հոդվածների առնչությամբ, որոնք հայտարարվել էին անընդունելի: Դատարանը պատշաճ կերպով հաշվի չի առել, որ վեց բողոքներից միայն մեկն է հայտարարվել ընդունելի եւ միայն մեկ խախտում է ճանաչվել, թեեւ Դատարանը վճռի 135-րդ պարբերությունում կրկին նշել է, որ դատական ծախսերը փոխհատուցվում են այնքանով, որքանով կապված են ճանաչված խախտման հետ: